191·99-8
Ա-62
3277

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

ԴԱՅԼԱՅԼԻՑ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ Բ. ՏԱՐԻ

Կ. ՊՈԼԻՍ

ԳՐԱՏՈՒՆ ՏՊԱՐԱՆ

Ռ. ԳԷԼԷՀԵԱՆ Օ. ԱՐԶՈՒՄԱՆ

1913

491.99-8
Ա-68

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ց. ԳԼԼԸՃԵԱՆ ԳՐԱՏԱՆ

428
250-ԱՆ

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

ԳԱՅԼԱՅԼԻԿ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ Բ. ՏԱՐԻ

468

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
* C.C.P.A. Публичная библиотека *
7/XI-1922
ԵՐԵՎԱՆ, Мясникяна
Ս. ՍՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԿԷ ԳՈԼԻՍ
ԳՐԱՏՈՒՆ Ց. ԳԼԼԸՃԵԱՆ
1913

2062

11833

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱՁՄԱՏՈՒՆ
Ѳ. ԱՐԶՈՒՄԱՆ
№ 169

ԴԱՅԼԱՅԼԻԿ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

1. ԸԼԼԱԼ, ԵՐԵՒԱԼ

(ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ)

Մեղանի մը վերան ելած էր Զարմայը,
Ու կը պոռար.—«Տե՛ս, ալ մեծ մարդ եղայ, հա՛յր»։
Երբ վար իջաւ, պատասխանեց հայրն իրեն.
—«Մեծ երեւցար, բայց տե՛ս, պզտիկ ես նորէն։
Պէտք է ըլլալ,
Ո՛չ երեւալ.
Խրատս ըլլայ, եղի՛ր մեծ մարդ, թէ կրնաս,
Ինքզինքդ երբեք մի՛ մեծցներ դուն, տղա՛ս»։

2. ԾՈՅԼԻՆ ԱՌՏՈՒՆ

Առտու եղաւ, աքլորը ձայնեց, լոյսը բացուեցաւ։

Ռուբէն արթնցեր է քունէն ու կը պոռայ.

«Օդը ցուրտ է, մա՛յր, չեմ ուզեր ելլել անկողնէն»։



Ռուբէն իջեր է անկողնէն, աչուքները կը շփէ։

Մայրը կանուխ մաքրեր ու աւլեր է ամէն կողմ։

Ռուբէն նորէն կը պոռայ.

«Ջուրը պաղ է, մա՛յր, չեմ ուզեր լուացուիլ»։

Աշխատութեան ժամը հնչած է արդէն։

Թռչունները կ'երգեն, մարդիկ կ'երթան իրենց գործին, փողոցէն վաճառորդները կ'անցնին պոռալով։

Ռուբէն կը տնտնայ։

«Դուրսը ձիւն կայ, մա՛յր, չեմ ուզեր դրսը երթալ»։

Կուգայ սակայն նախաճաշին ժամը։

Ռուբէն անօթի է ու կը պոռայ.

«Փորս անօթի է, մա՛յր, կ'ուզեմ նախաճաշ ընել»։

Բայց այս անգամ, մայրն է որ կը տընտընայ, ու կ'ըսէ.

«Օդը ցուրտ է, ջուրը պաղ է, դուրսը ձիւն կայ, չեմ ուզեր նախաճաշդ տալ։

Եւ Ռուբէն անօթի կը մնայ ու կուլայ։

Ռուբէն ա՛լ ասկէ ետքը կանուխ պիտի ելլէ, շուտով պիտի լուացուի, պիտի աճապարէ դպրոց երթալու։

Եւ մայրիկը ճիշդ ատենին նախաճաշը պիտի տայ, քանի մը պտուղ ալ աւելի։

Հարցումներ նիւթին վրայ (Գիրքը դոց). — Ռուբէն ինչո՞ւ չէր ելլեր անկողնէն, ինչո՞ւ չէր ուզեր լուացուիլ.—Ի՞նչ տեսակ օդայ է Ռուբէն.—Մայրը ինչպէ՞ս պատեց զինքը.—Ի՞նչ է վաճառորդը.—Քանի՞ տեսակ վաճառորդ կը ճանչնամ:

Հարցումներ պատկերներուն վրայ (Գիրքը բաց). — **Ա. Պատկեր.**—Ի՞նչ տեսակ կենդանի է երեւցածը.—Ի՞նչ բացեր է.—Ի՞նչ տեսակ ծառն կը հանի.—Երբ առուն կանչի, ինչի՞ նշան է.—Ո՞ւր կը բնակի: **Բ. Պատկեր.**—Ի՞նչ կ'ընեն պզտիկ տղան.—Ինչո՞վ կը լուացուի.—Ձեռները ինչո՞վ պիտի չորցնի.—Ինչի՞ մէջ կը լուացուի:

---

3. ԽԵՆԹՈՒԿ ԶԻՒՆԸ

Խենթուկ ձիւնը կ'իջնէ նորէն, հա կ'իջնէ։ Զմեռ է։

Երէկ իրիկուն բան չկար մէջտեղը, բայց ահա այս առտու, երբ պատուհանը բացինք, տեսանք որ ամէն կողմ ճերմկցուցեր է։

Նայեցէ՛ք, լեցուցեր է օդը, և չենք կրնար դէմի տունները տեսնել։

Իր փաթիլները կը դառնան, կը պարեն, մէյ մը մինակ, մէյ մը խումբով։

Շատերը գինովի պէս կ'երերան, կ'ինան գետին։ Ուրիշներ՝ ծառերուն վրայ յոգնութիւն կ'առնեն։ Մէկ քանի հատն ալ կու գան մեր պատուհանը և ապակիին կը փակչին։

Բայց ինչո՞ւ մեր սիրական ծիծեռնակները չենք տեսներ։ Բոլորն ալ ձգեր փախեր են։ Մէկ հատ անգամ չէ մնացեր։

Ծիծեռնակները փախեր են, որովհետեւ

խենթուկ ձիւնը շատ ցուրտ է, և ծիծեռնակները մսկոտ են։

Բայց ծիծեռնակներուն տեղ ճնճղուկները կան, որոնք մսկոտ չեն։ Ահա եկեր են մեր պա-



տուհանին առջեւ, կը սպասեն որ հացի փշրանքներ նետենք իրենց։

Մենք ալ կը մսինք, կրակ կը վառենք երբ ձիւն կուգայ, և տաք հագուստներ կը հագնինք։

Ձիւնը խենթուկ է, բայց մեծ նկարիչ մըն է։

Ինչ աղուոր ճերմակ գոյնով մը ներկեր է ամէն բան, տունները, ծառերը, փողոցները, դանգակատունը։

Մեր անկողնին սաւաններուն պէս մաքուր է իր ներկը։

Բայց խենթուկ ձիւնին գծած պատկերները շատ չեն դիմանար։ Վաղը արեւը կ'ելլէ և ամէնքն ալ կը հալին։

Յետոյ կու գայ գարունը, օդը կը տաքնայ, և մեր սիրուն ծիծեռնակները նորէն մեր քով կը դառնան։

Հարցումներ Ճիւրիճ վրայ (Գիրքը դոց).— Ե՞րբ ձիւն կուգայ. — Ձիւնը ինչ գոյն ունի.—Ուրիշ ինչի՞ գիտիք այդ գոյնով.—Ինչո՞ւ ծիծեռնակները ձմեռը կը փախին եւ ճնճղուկները կը մնան:

Հարցումներ պատկերին վրայ (Գիրքը բաց).—Ինչ գոյց կու տայ պատկերը.—Ձիւնը ո՞ր տեղերը ծածկեր է.—Ի՞նչ է իսալ իրող շինիը.—Ուսուցչուն վրայ ինչ կը պակսի :

---

4. ՆՈՐ ՏԱԲԱՏ

Երբ վեց տարեկան եղայ, մայրիկս առաւուն կանուխ եկաւ անկողնիս մօտ, և ըսաւ.

—Արտաւանդ, ելիր շուտով, հայրդ ազուոր նուէր մըն է բերեր քեզի։

Խենթի պէս վար ցատկեցի անկողինէս և վազեցի հայրիկիս քով։

Հայրիկիս նուէրը նոր նոր տաբատ մըն էր, և ես դեռ տաբատ չէի հագած։

—Համբուրէ՛ հօրդ ձեռքը, ըսաւ մայրիկս, ու նայէ որ տաբատդ մաքուր պահես։

Ուրախութենէս՝ հայրիկիս վիզը ցատկեցի, յետոյ մայրիկիս ալ։



Երբոր տաբատը հագայ, ինծի անանկ երեւցաւ որ ալ մեծ մանչ մը եղած եմ։ Կ'ուզէի որ ընկերներս զիս տեսնեն այդ տաբատով։ Ամէնքն

ալ պիտի փափաքէին որ ինծի պէս հագուած ըլլան։

Յերեկին՝ վերջապէս մայրս թողուց որ դուրս ելլեմ։

Վազելով ելայ տունէն, շուտ մը ընկերներս գտնելու համար։

Բայց ահա Նանօն, մեր դրացիին շունը, նստեր էր արեւին տակ։

—Նանո՛, ըսի, նայէ՛ տաբատս, ես ալ մեծ մանչ եղայ. իսկ դո՛ւն, անպիտան, դեռ տաբատ չունիս։

Կ'ուզէի որ Նանօ դիտէ տաբատս և հաւնի անոր, բայց անպիտանը կարեւորութիւն անգամ չէր տար։

Ան տեսնելով՝ փայտ մը առի, և Նանօին աղուոր հարուած մը տալէ վերջ պիտի փախչէի, բայց ժամանակ չունեցայ։

Զար շունը շուտ մը ինծի դարձաւ, և ակռայի մէկ հատիկ հարուածով մը թէ տաբատիս կտորը հանեց և թէ միսս արիւնեց։

Վէրքս կը ցաւէր, բայց ես աւելի կը ցաւէի իմ առաջին տաբատիս համար, որուն վրայ Նանօի ակռաները խոշոր ծակ մը բացած էին։

Հարցումներ Գիւրին վրայ (Դիրքը գաց). — Արտաւազդ ի՞նչ առթիւ նոր տարաս մը նուէր ստացաւ. — Տարտահն գաս ուրիշ ի՞նչ տեսակ հագուստներ ունիմ. — Նանօն իրաւունք ունի՞ր Արտաւազդի տարաւոր պատռելու. — Ինչո՞ւ. — Արտաւազդի ձեռքը ի՞նչ ըսին, երբ պատռած տարաւոր տուն դարձաւ։

Հարցումներ պատկերին վրայ (Դիրքը բաց). — Ի՞նչ անցուցած են Նանօին վրայ. — Դիմին վրայ քանի՞ գոյն կայ. — Ականջները ի՞նչ ձեւ ունին. — Ո՞ր ոտքերուն վրայ նստած է։

---

5. ԿՈՏՐԱԾ ԱՊԱԿԻՆ

Յակոբ շատ խելօք տղայ մը չէ, բայց ամէն մարդ կը սիրէ դինքը, որովհետեւ սուտ չի խօսիր։

Երբ ուսուցիչը կը հարցնէ իրեն.—«Յակո՛բ, դո՞ւն ըրիր ատիկա»,—դիտէ որ Յակոբ միշտ ճշմարիտը պիտի ըսէ։

Առջի օր, Յակոբ և ընկերները գնդակ կը խաղային, երբ յանկարծ Յակոբի գնդակը գնաց Նպարավաճառին ապակիին զարնուեցաւ։

Ապակին կոտրեցաւ, բայց ոչ ոք տեսաւ թէ Յակոբի գնդակէն կոտրած էր։

Նպարավաճառն ալ որ խանութէն դուրս վազած էր, չէր գիտեր թէ ո՛վ է կոտրողը։

Բայց այդ միջոցին անկէ կ'անցնէր Մինաս, որ չար տղայ մըն էր, և որուն վրայ կարելի էր կասկածել։

Նպարավաճառը կարծեց թէ ան է ապակին կոտրողը և դայն բռնեց։

Մինաս կը պոռար կը կանչէր թէ ինք չէ, բայց ուրիշ ատեններ այնքա՜ն սուտ կը

խօսէր որ նպարավաճառը չէր ուզեր հաւատալ։ Խեղճ Մինաս աղուոր ծեծ մը պիտի ուտէր։

Բայց Յակոբ շուտ մը թողուց ընկերները, և նպարավաճառին քով երթալով, ըսաւ.

—Մի՛ ծեծէք Մինասը, զիս ծեծեցէք անոր տեղ, որովհետեւ ապակին ես կոտրեցի անուշադրութեամբ։

Հարցումներ նիւթին վրայ (Դիրքը գոց).—Ինչո՞ւ կը սիրեին Յակոբը.—Ի՞նչ պատահեցաւ գնդակ խաղացած ատենին.—Ո՞վ էր Մինաս եւ ինչո՞ւ նպարավաճառը չէր հաւատար անոր խօսքին.—Ի՞նչ պիտի զգար Յակոբ՝ եթէ թողուր որ Մինաս ծեծ ուտէ իրեն տեղ.—Ըսէք թէ նպարավաճառը ծեծե՞ց Յակոբը։

Հարցումներ պատկերին վրայ (Դիրքը բաց).—Քանի՞ տղայ կը տեսնուի պատկերին մէջ.—Ի՞նչ հագած են։—Ի՞նչ կ'ընեն գետին ծռածը։—Եթէ անոնցմէ երկուքը երթան՝ քանի՞ տղայ պիտի մնայ.—Իսկ եթէ ուրիշ երկու տղայ անոնց միանան՝ քանի՞ հոգի պիտի ըլլան։

---

6. ՆԵՑՈՒԿԸ

(ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ)

Վարդատունկ մը, ազատասէր,
Պարտիզպանին օր մը կ'ըսէր.
—«Ո՜հ, փրկէ զիս, շատ կ'աղաչեմ
Սա հաստ փայտէն խոժոռադէմ
Որ քովս ի վեր
Է տնկուեր։
Ալ իմ ոյժերս, ո՜վ պարտիզպան,
Ինձ կը բաւեն, ի՞նչ պէտք պաշտպան։
Ինքնիրենս, արեւին տակ
Կ'ուզեմ ծաղկիլ ես շիտ շիտակ»։

Պարտիզպանն հազիւ փայտն հանեց քովէն,
Վարդատունկն ինկաւ, կոտրեցաւ հովէն։

7. ՄԿՆԻԿԻՆ ԽԵԼՔԸ

Մկնիկ մը իր մաղոտ քիթը դուրս հանեց պատին ծակէն, և վախով նայեցաւ չորս կողմը։ Խեղճը անօթեցեր էր և դուրս ելլել կ'ուզէր, բայց կը վախնար որ կատուն հոն կ'ըլլայ։

Իրաւ ալ հոն էր մեր փիսիկը, պլորուեր նստեր էր, ինք ալ կերակուրի կը սպասէր։

«Եկո՛ւր, իմ սիրունիկ մկնիկս, եկուր խաղանք միասին», ըսաւ փիսիկը։

Բայց մկնիկը դուրս չելաւ։

«Եկո՛ւր, ըսաւ նորէն փիսիկը, սիրաս կը նեղանայ, և խաղի ընկեր մը կը փնտռեմ»։

Փիսիկը քանի՛ լեզու կը թափէր, մկնիկն ալ այնքան գըլուխը կ'երերցնէր ու լեզու կը հանէր։

«Ի՞նչ ալ անուշ կը խօսիս, փիսիկ քուրիկ, ըսաւ վերջապէս։ Բայց մոռցեր ես որ հայրիկս ու մայրիկս դեռ նոր նոր խեղդեցիր։ Եթէ դուրս ելլեմ, դիս ալ պիտի խեղդես անոնց պէս»։

Յետոյ, գլուխը ծակէն ներս քաշեց և գնաց եղբօրը պատմելու կատուին տուած պատասխանը։

Հարցումներ նիւթին վրայ (Գիրքը գոց). — Մկնիկը ինչո՞ւ ծակեն դուրս եկել կ'ուզէր. — Ումի՞ կը վախնար. — Ինչո՞ւ կը վախնար. — Ո՞վ կար այնտեղ եւ ի՞նչ եղաւ. — Ի՞նչ տեսակ կենդանի է մուկը:

Հարցումներ պատկերին վրայ (Գիրքը բաց) **Ա. Պատկեր.** — Ի՞նչ կը տեսնէք պատկերին մէջ. — Աղջիկը ինչո՞վ կապած է մազերը. — Ո՞ր ձեռքով բռնած է փիսիկին վիզը. — Մուս ձեռքը ո՞ւր է: **Բ. Պատկեր.** — Ի՞նչ կ'ընեն մկնիկները:

---

8. ԱԴԱՄԱՆԴԸ

(ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ)

— «Ո՜հ, ինչ շըքեղ ադամանդ...
Մինչ սա քարն է անպիտան...»։
— «Ո՛չ, ադամանդ մ'է ան ալ,
Ճիշտ միւսին պէս պատուական.
Բայց մէկն՝ անտաշ տակաւին,
Միւսն յըղկըւած է արդէն»։
— «Հայր, կ'ուզեմ որ անոր պէս
Ձիս ալ յղկեն ու կրթեն»։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Պուբլիչնայա Բիբլիոթեկա
7/XI-1922
ԱՆՎԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ

9. ԱՌԱՋԻՆ ՀՈՎԱՆՈՑԸ

Մարկոս կանուխ ելեր է քունէն, դպրոց պիտի երթայ, բայց սատանորդի անձրեւը կ'իջնէ ու կ'իջնէ։

Հինգ վայրկեան, տասը վայրկեան, քսան վայրկեան։ Ժամանակն է կ'անցնի, և անձրեւը չի դադրիր։

Բայց ահա մայրիկը հովանոց մըն է բերեր ու կ'ըսէ.

— Ա՛ռ, Մարկոս, վազէ դպրոց, բայց զգուշացիր հովէն որ հովանոցդ չդարձնէ։

Մարկոս փողոցն է արդէն ու կը փութայ դպրոց։ Անձրեւը կու գայ միշտ, բայց որո՛ւ հոգ, հովանոցը բաց է։

Ի՜նչ աղուոր է, երբ վրայէդ անձրեւը կ'իջնէ ու դուն չես թրջիր։

Հպարտ, հպարտ կը քալէ Մարկոս. կարծես մեծ մարդ մըն է եղեր։ Ալ հոգը չէ որ անձրև կու գայ։

Բայց ի՞նչ եղաւ։ Մարկոսի դէմքը ալ ուրախ չէ։ Շիտակ ալ չի քալեր. կարծես գինով է, կ'երերայ, և հովանոցն ալ իրեն հետ։

Խենթուկ հովը փախցուցեր է խեղճ Մարկոսին ուրախութիւնը. պը՛ըր, կ'ընէ ու կը փչէ, այնքա՛ն ուժով կը փչէ, որ Մարկոս չի կրնար ոտքի վրայ կենալ։

Անպիտան հովանոցն ալ կարծես խօսք մէկ ըրեր է հովին հետ, փախիլ կ'ուզէ Մարկոսի ձեռքէն։

«Բաթ, չաթ, բաթ, չաթ, բաթ, չաթ...»

Հովանոցին թելերն են որ կը կոտրին։

Պը՛ըր, կը փչէ հովը նորէն և հովանոցը կը դառնայ։ Մարկոսի գլխարկն ալ կը թռի գլխէն։ Իսկ անձրևը միշտ կ'իջնէ։

Ահա Մարկոս տուն կը դառնայ։ Որչա՜փ հպարտ էր մեկնած ատենը, և որչա՜փ տխուր է վերադարձած ատենը։

Անձրեւը չէ դադրած դեռ, և Մարկոս մուկի պէս թրջեր ու ցեխոտեր է։

Աղուորիկ հովանոցն ալ ձեւէ ելեր՝ բանի մըն ալ չի նմանիր։

Ի՞նչ պիտի ըսէ արդեօք մայրիկը։

Բայց մայրիկը բարի է։

— Հոգ չէ, տղաս, կ'ըսէ, գիտեմ որ չար հովը ըրաւ, բայց մի տրտմիր. վաղը դուն կը մեծնաս, կ'ուժոտնաս, և խենթ հովը այլ չի կրնար հովանոցդ դարձնել։

Հարցումներ նիւթին վրայ (Գիրքը գոց).—Ի՞նչ տեսակ առարկայ է հովանոցը, ի՞նչ մասեր ունի, ո՞վ կը շինէ զայն։—Միևնոյն անձրևի՞ համար կը գործածեմ զայն.—Ո՞ւն է այն բնակարանը որ հովանոցի կը նմանի։

Հարցումներ պատկերներուն վրայ (Գիրքը բաց). — Պատկերներուն հետևելով պատմեցէք Մարկոսի գլխուն եկածը։

---

10. ԲԱՐԻ ԱՆՁՐԵՒԸ

Ահա երկինքը ամպոտեր է, գետինը թրջեր է, ծառերու տերեւներէն ջուր կը կաթի, ապակիներուն վրայէն կաթիլներ կը սահին։

Անձրեւն է որ կուգայ, ու կը հարցնէ.

— Ո՞վ կը սիրէ անձրեւը։

— Ե՛ս, կ'ըսէ խոտը։

— Ե՛ս, կ'ըսեն բոլոր ծաղիկները։

— Ե՛ս, կ'ըսէ գետակը։

— Ե՛ս, կ'ըսեն բոլոր թռչունները։

— Ե՛ս, կ'ըսէ մեղուն։

— Ե՛ս, կ'ըսէ տանտիկին մայրիկս։

Այն ատեն՝ անձրեւը կը սկսի գալ առատ առատ։



— Որչափ առատ գաս, այնքան պիտի աղուորնայ իմ կանանչ դոյնս, կ'ըսէ խոտը։

Ծաղիկները բարձրացուցեր են իրենց գեղեցիկ գլուխը և կ'ըսեն.

— Շնորհակալ ենք, բարի անձրեւ, դուն մեզ աւելի գեղեցիկ կը դարձնես։

— Անձրեւի իւրաքանչիւր կաթիլ ինծի կ'օգնէ որ մեծ գետ մը դառնամ, կ'ըսէ գետակը։

— Անձրեւը կուգայ, ծառերը կը ծաղկին, պտուղները կը հասնին, լաւ կերակուր պիտի ունենանք, կ'ըսեն թռչունները։

— Ահա ծաղիկները պիտի աղուորնան և իրենց հիւթը պիտի համոզնայ, կ'ըսէ մեղուն։

Իսկ մայրիկս փառք կուտայ, ըսելով.

— Բարի Աստուածը այսօր ալ անձրեւ ղրկեց մեզի։ Հորեւրուն մէջ ջուրը պիտի շատնայ, կանանչեղէն-

ները պիտի հանին, պտուղները առատ պիտի ըլլան, և իմ աշխատասէր զաւակներս համով կերակուր և անուշ պտուղներ պիտի ունենան։

Այսպէս՝ ամէնքն ալ ուրախ են որ անձրեւ կու գայ։

Հարցումներ նիւթին վրայ (Գիրքը գոց). — Ըսիր թէ խոտը, ծաղիկները, գետակը, թռչունները, մեղուն եւ տանտիկին մայրիկը ինչո՞ւ կ'ուրախանային որ անձրեւ եկաւ. — Ինչ տարբերութիւն կայ գետի մը եւ գետակի մը մէջ. — Գետակը ինչպէ՞ս գետ կը դառնայ անձրեւի կաթիլներով։

Հարցումներ պատկերներուն վրայ (Գիրքը բաց)։ **Ա.** Պատկեր. — Ինչ բանջարեղէններ կը տեսնիր պատկերին մէջ։ **Բ.** Պատկեր. — Ինչ ծաղիկ է։ **Գ.** Պատկեր. — Ինչ ծաղիկ է. — Բուն ծաղիկն զատ ինչե՞ր կը տեսնուին պատկերին վրայ. — Ինչ ձեւ ունիր բացուելէ առաջ. — Ինչ գոյն կ'ըլլայ. — Հապա տերեւնե՞րը։

---

11. ԿԸՏ ԿԸՏ, ԹՕՔ ԹՕՔ

«Կըտ, կըտ, կը՛տ, կըտ կըտա՛ք...»

— Ի՞նչ է ան, Նապաստակ եղբայր, ո՞վ կը պոռայ կըտ կըտա՛ք...

— Մի՛ շփոթեցներ զիս, չա՛ր տղայ, չե՞ս տեսներ որ ԴԱՅԼԱՅԼԻԿ կը կարդամ։

«Կըտ կը տա՛ք, կը տա՛ք...»։

— Ի՞նչ է ան, սագ եղբայր, ո՞վ կը պոռայ կըտ կը տա՛ք...

— Սը՛ստ, ձայն մի՛ հաներ, հաւ քուրիկն է որ կը պոռայ։

«Կըտ կը տա՛ք, կը տա՛ք...»

— Ի՞նչ է ան, աքլոր եղբայր, ինչո՞ւ հաւ քուրիկը կը պոռայ կըտ կը տա՛ք, կը տա՛ք...

— Հաւկիթ է ածեր, կը տա՛ք, կը տա՛ք, կըտ կըտ կըտա՛ք։



«Թոք, թոք, թոք թոքթո՛ք...»

— Ի՞նչ է ան, Նապաստակ եղբայր, ո՞վ կը պոռայ թոք թոքթո՛ք...

— Է՜, երկայն ըրիր, ձգէ՛ որ ԴԱՅԼԱՅԼԻԿս կարդամ։

«Թոք, թոք, թոք թոքթոք...»

— Ի՞նչ է ան, սագ եղբայր, ո՞վ կը պոռայ թոք թոքթոք։

— Սը՛ստ, մի՛ վախցներ, պզտիկ վառեակն է որ կը պոռայ։

«Թոք, թոք, թոք թոքթոք...»

— Ի՞նչ է ան, աքլոր եղբայր, ինչո՞ւ պզտիկ վառեակը կը պոռայ թոք, թոք թոքթոք...

— Կճեպը կոտրեց և դուրս ելաւ հաւկիթէն, թոք, թոք, թոք թոքթոք։



Կըտ կըտ, ըրաւ հաւ քուրիկը և հաւկիթը ածեց, կըտաք, կըտ կըտաք...

Թոք թոք, ըրաւ պզտիկ վառեակը և կճեպը կոտրեց, թոք, թոք, թոք թոքթոք...

Ճիւ ճիւ, կ'ընէ հիմայ և կոուցն է բացեր, ճիւ, ճիւ ճիւճիւ...

Ուտելիք կ'ուզէ, որ մեծնայ և ընէ կըտ, կըտ, կըտաք, կըտ կըտաք...

Եւ հաւկիթ ածէ։

Հարցումներ նիւթին վրայ (Գիրքը գոց). — Ի՞նչ լսեց տղան, ի՞նչ հարցուց, ի՞նչ ըսին իրեն նապաստակը, սագը ու աքլորը. — Ո՞ւր կը գտնուի նապաստակը. — Ի՞նչ օգուտ ունին միւսները. — Հաւկիթը ինչպե՞ս կը գործածեն. — Ե՞րբ կը ներկեն զայն եւ ի՞նչ գոյնով։

Հարցումներ պատկերներուն վրայ (Գիրքը բաց) **Ա. Պատկեր.** — Ո՞րն է աքլորը, ո՞րն է նապաստակը, ո՞րն է սագը, ո՞րն է հաւը.— Ի՞նչ կ'ընեն. — Աքլորը նապաստակին եւ սագին ո՞ր կողմը կեցած է. իսկ հաւի՞ն.— Սագը ի՞նչ է բացեր. — Նապաստակին դունչին վրայ ինչո՞ր կան։

---

12. ԱՄՊԵՐԸ

Երբոր երկինքը նայիք՝ հարկաւ կը տեսնէք ամպերը։ Անոնք կամ բոլորովին ճերմակ են և կամ գորշ գոյն մը ունին։

Նայեցէք ուշադրութեամբ, և պիտի տեսնէք որ իրարու ետեւէն կը վազեն՝ ճամբուն վրայէն անցնող գառնուկներուն պէս։

Հովն է որ կը տանի զանոնք, աշնան ուժով հովը, որուն ձայնը կը լսենք շատ անգամ։

Ինչպէս որ հովիւը ոչխարները կը տանի, անանկ ալ հովը ամպերը կը տանի։

Հովը ամպերուն հովիւն է։

Աղուոր չէ երկինքը՝ երբ ամպերը կը ծածկեն զայն։ Սպասենք ուրեմն որ անցնին անոնք, և երկինքը տեսնենք առանց ամպի։

Ահա հովն ու ամպերը անցան գացին, և երկինքը կ'երեւայ պայծառ ու կապոյտ։

Ի՞նչ աղուոր է, նայեցէք, լաւ նայեցէք, որով-

հետեւ հիմայ նորէն հով կ'ելլէ և նոր ամպերով կը ծածկէ երկինքը։

Աշուն է հիմայ, և երբ աշունը սկսի, ամպերը շուտ շուտ կուգան, իրարու ետեւէ, և երկինքը միշտ կապոյտ չի մնար։

Հարցումներ նիւթին վրայ (Գիրքը գոց). — Ամպերը ի՞նչ գոյն ունին. — Երկինքը ի՞նչ կ'ըլլայ, երբ ամպերը կը ծածկեն զայն. — Երբ ամպերը երթան՝ երկինքը ի՞նչ գոյն ունի. — Ի՞նչ տարբերութիւն կայ սեւին ու գորշին մէջ. — Ի՞նչու հովին «ամպերու հովիւ» կ'ըսենք։

Հարցումներ պատկերին վրայ (Գիրքը բաց). — Ի՞նչ կը տեսնէք պատկերին մէջ. — Ամպերը ո՞ւր են. — Որո՞նք են մեծ ծառերը. — Որո՞նք են պզտիկ ծառերը. — Ի՞նչ անուն կու տան պզտիկ ծառերուն։



13. ԻՄ ՀՈԼՍ

(Ս. ՐՏՍՍԱՆՈՒԹԻՒՆ)

— «Դարձէ՛ք, իմ հոլս, մի՛շտ դարձէք,
Դարձէք նորէն, հա՛ դարձէք,
Եթէ դառնալէ դադրիս,
Պիտի տանջեմ քեզ, հոգիս»։

Իմ հոլս է ինձ հընազանդ,
Եւ կը դառնայ աստ ու անդ,
Սա մտրակէս կը վախնայ,
Որ զինք ծեծէ անխընայ։

14. ՀԱՒԵՐՈՒՆ ՁԱՐՄԱՆՔԸ

(ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԱՌԱՆՑ ՆԻՒԹԻ)



Հարցումներ.—Ի՞նչ կ'ընեին երկու հաւերը.—Ինչի՞ վրայ նստած էին.—Ինչպէ՞ս եղաւ որ հաւերուն մէկը բնաւ հաւկիթ չդցաւ եւ միւսը երկու հաւկիթ գցաւ.—Ինչո՞ւ գլորեցաւ հաւկիթը:

Ուսուցիչներուն.—Կը խնդրուի այս վարժութեանց մէջ, որոնք տեղի պիտի ունենան գիրքը բաց, օգնել աշակերտներուն։ Համանման վարժութեանց առարկայ կրնան դառնալ նաև գիրքին կցուած գունաւոր յաւելուած-պատկերները։

15. ՄԻՀՐԱՆ ՆԿԱՐԻՉ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ

Միհրան նկարիչ պիտի ըլլայ։ Երբ ձեռքը թուղթ ու մատիտ անցնի, անմիջապէս կը նստի պատկեր կը շինէ։



Պզտիկ եղած ատենն այ Միհրան միշտ սիրած էր գծագրութիւնը։ Գծած պատկերները շատ ճիշտ չէին, բայց գծելով գծելով Միհրան վարժուեցաւ, և հիմայ բաւական կը յաջողի։

Շատ անգամ թուղթը կը հատնի, բայց Միհրանի մատիտը հանդարտ չի կենար։ Մուկի մը պէս կ'ոստոստէ, մէյ մը հոս, մէյ մը հոն,



և քիչ մը ամէն տեղ պատկերներ կը գծուին։

Օր մը, իր դասագիրքին էջերը սեւցուցեր էր, և վարժուհին զինքը յանդիմանեց, պատուիրելով որ գիրքը մաքուր պահէ։

Բայց երէկ՝ Միհրանի թուղթը նորէն հատեր էր։ Փնտռեց, վնտռեց, բան չգտաւ։

Այն ատեն՝ մատիտը առաւ և պատը սեւ-ցուց մէկ կողմէն միւսը, կենդանիի պատկեր-ներ գծելով։

Պատկերները այնքան աղուոր էին, որ Միհ-րան կը ցատքրտէր ուրախութենէն։

Բայց իր ուրախութիւնը շատ չտեւեց։ Մայրը յանկարծ ներս մտաւ սենեակէն, և տես-նելով եղածը, աղուոր մը պլորեց Միհրանի ականջները։

Հարցումներ նիւթին վրայ (Գիրքը գոց). — Ի՞նչ է նկարիչը. — Վարժուհին ինչո՞ւ յանդիմանեց Միհրանը. — Ինչպէ՞ս պէտք է պահել դա-սագիրքերը. — Միհրանի ականջները ինչո՞ւ պլորուեցան։

Հարցումներ պատկերներուն վրայ (Գիրքը բաց). — **Ա. Պատ-կեր.** — Ի՞նչ բան կը պակսի գծուած դիմքին վրայ։ **Բ. Պատկեր.** — Միհ-րան ի՞նչ կենդանի գծած է պատին վրայ. — Ի՞նչ կենդանիներ են։

16. ՄԵՂՈՒՆ ԵՒ ԹԻԹԵՌԸ

(ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ)

— «Եթէ օդը գեղեցկանայ»,
Կ՚ըսէր թիթեռ մը սիրունիկ,
«Եթէ օդը գեղեցկանայ,
Դաշտերուն մէջ՝ հեզիկ հեզիկ՝
Պիտի խաղամ մարգին վրայ»։

— «Ու ես», ըսաւ մեղուն քովէն,
«Պիտի իմ գործս շարունակեմ,
Եթէ օդը գեղեցկանայ»։

17. ԹՌՉՈՒՆԻՆ ԲՈՅՆԸ

(ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԱՌԱՆՑ ՆԻՒԹԻ)

Հարցումներ.—*Քանի՞ մանչ կայ պատկերին մէջ եւ քանի՞ աղջիկ. — Ինչո՞ւ կը զանազանիք զանոնք. — Ինչո՞ւ թիրեւ հագուստներ հագած են. — Ի՞նչ կը դիտեն. — Ուրկէ՞ առած են զիրենք հեռաւորող առարկան. — Ինչո՞վ եւ ի՞նչ կերպով շինուած է:*

Առուակին վրայ

18. ԽԵՂՃ ՍՏԱՄՈՔՍԸ

Շատակեր տղաք մինակ ուտելու խմելու հոգ կը տանին։

Բայց չի բաւեր միայն ուտել. ուտելէ ետք պէտք է մարսել, և մարսելու համար ալ՝ պէտք չէ շատ յոգնեցնել ստամոքսը։

Դոյլ մը ջուրը ծանր բեռ մըն է այս գիրքը կարդացող տղոց համար. չեն կրնար զայն տանիլ։ Զափազանց կերակուրն ալ այդ դոյլով ջուրն է ստամոքսին համար. չի կրնար զայն տանիլ։

Եթէ բռնի՝ «տար» ըսես, շուտ մը կը տկարանայ. և հազիւ թէ ստամոքսդ տկարացաւ, շուտ մը կը հիւանդանաս։

Ասանկ վորձանք մը եկաւ խեղճ Ղուկասի գլխուն։

Ղուկաս շատակեր չէր, բայց անուշեղէնը շատ կը սիրէր։

Կ'ուտէր, կ'ուտէր, և նորէն կ'ուզէր։ Յետոյ նորէն կ'ուտէր, և նորէն կ'ուզէր։

Երբ հայրը իրեն դրամ տար, շուտ մը շաքարավաճառին կը վազէր, և անուշեղէն մը գնելով մը լափէր։

Այնքան ախորժակով կ'ուտէր որ կարծես շաբաթ մը ամբողջ բերանը բան չէր դրած։

Եւ եղաւ, ինչ որ պիտի ըլլար։ Ղուկասի ստամոքսը յոգնեցաւ, տկարացաւ։ Օր մըն ալ Ղուկաս հիւանդ ինկաւ և պառկած մնաց անկողնին մէջ։

Յետոյ բժիշկը եկաւ, քննեց զայն, և գլուխը երերցնելով ըսաւ.

— Խեղճ ստամոքսը ի՞նչ յանցանք ունէր որ այսչափ յոգնեցուցեր է. ամիս մը պէտք է որ առողջանայ. և ամբողջ ամիս մը, միայն դեղ ու քիչ մը կաթ պիտի խմէ։

Ղուկաս այդպէս ամբողջ ամիս մը հիւանդ պառկեցաւ, ու շատ ցաւ քաշեց։

Բայց ամէնէն աւելի նեղուեցաւ անոր համար որ ամբողջ ամիս մը բնաւ անուշեղէն չկըրցաւ ուտել։

Հապա դե՞ղը։ Զէ՞ք հարցներ թէ ինչ դեղ էր իրեն տրուածը։ Լեղի, լեղի, այնքան լեղի, որ սատանան անգամ բերանը պիտի թթուեցնէր եթէ ուտէր։

Եթէ Ղուկաս անուշեղէնը չափով կերած ըլլար, այս փորձանքը չպիտի գար գլխուն։

Քիչ պիտի ուտէր, բայց ամէն օր պիտի ուտէր, և հիւանդ չպիտի պառկէր։

Հարցումներ նիւթին վրայ (Գիրքը գոց). — Ինչո՞վ կը մարսենք կերակուրը.—Ինչո՞ւ պէտք է զգուշութեամբ վարուիլ ստամոքսին հետ.—Ինչպէ՞ս եղաւ որ Ղուկաս ամբողջ ամիս մը չկրցաւ անուշեղէն ուտել, հիւանդ պառկեցաւ եւ լեղի դեղ խմեց։

---

19. ՍՆԱՓԱՌ ՎԱՌԵԱԿՆԵՐԸ

«Ճիւ, ճիւ, ճիւի, ճիւի»։
Վառեակները դեռ նոր ելեր են հաւկիթէն, բայց արդէն իսկ մեծ տիկինի հովեր առեր են։
«Ճիւ, ճիւ, ճիւի, ճիւի»։



Ի՜նչ ալ գոռոզ են։ Ահա հպարտ հպարտ իրենց շուրջը կը նային, տեսնելու համար որ իրենց հաւասարող կենդանի մըն ալ կը գտնուի՞։

«Կա՛ռ, կա՛ռ, կառի, կառի»։
Գորտ մը յանկարծ անոնց մօտ ցատկեց։

— Ո՜ւֆ, ինչ տգեղ կենդանի, ըսին վառեակները։

— Ի՜նչ խոշոր աչքեր...

— Ի՜նչ ծուռիկ ոտքեր...

— Ի՜նչ անշնորհք մարմին...

— Եւ ինչ խռպոտ ձայն, կառ, կառ, կառի կառի...

— Մինչդեռ մենք կ'ընենք՝ ճիւ, ճիւ, ճիւի ճիւի...

— Մեր աչքերն ալ աղուոր են...

— Մեր փետուրներն ալ...

— Մեր գլուխը սիրունիկ է...

— Եւ մեր քիթն ալ նուրբ։

Այն ատեն՝ գորտը անոնց դարձաւ և ըսաւ.

— Վառեակ քուրիկներ, շատ մի՛ հպարտանաք, շատ ալ մի՛ գոռոզնաք. ամէն մարդ պէտք

է գոհ ըլլայ իր վիճակէն և ուրիշներու վրայ չծիծաղի։

«Ես ալ հօրաքոյր մը ունէի որ ձեզի պէս սնափառ էր, մարդու չէր հաւներ։

«Օր մը, մինչդեռ գետին եզերքը նստեր էինք, կով մը տեսաւ, խոշոր, շատ խոշոր կով մը, և ըսաւ ինծի.

«— Սա կովն ալ կը կարծէ թէ ինք մեծ կենդանի մըն է. մինչդեռ ես, եթէ ուզեմ, կրնամ իրմէ աւելի խոշորնալ։

«Եւ սկսաւ ուռենալ, ուռենալ, նորէն ուռենալ։

«Խեղճ հօրաքոյր, շատ սնափառ էր, ի՞նչ ընէր։»

— Վերջը, հարցուցին վառեակները՝ հետաքրքրուած։

— Վերջը սա եղաւ որ ուռեցաւ, ուռեցաւ, ու մէյմըն ալ՝ բա՛թ... խեղճ հօրքուրիկս ճաթեցաւ։

Հարցումներ նիւթին վրայ (Գիրքը գոց). — Վառեակը ինչպէ՞ս կը ծնի. — Ո՞վ է իր հայրը. ո՞վ է իր մայրը.—Գորտը ի՞նչ տեսակ կենդանի է.—Մինչակ գիտնի՞ վրայ կ'ապրի թէ ուրիշ տեղ ալ.—Ի՞նչ էր պատահեր գորտին հօրաքրոջ։

Հարցումներ պատկերներուն վրայ (Գիրքը բաց).—(Բ. Պատկեր). —Ինչո՞ւ կը տեսնէիք պատկերին մէջ։

20. ԱՇՈՏԻՆ ԵՐԱԶԸ

Աշոտի էն մեծ թերութիւնն է անմաքրութիւնը. ուրիշ թերութիւններ ալ ունի, բայց հիմայ անոնց խօսքը չընենք։

Առտուն՝ երբ անկողինէն ելլէ, չի լուացուիր անմիջապէս, չի հագուիր, ոչ ալ կը ձգէ որ մայրիկը մազերը սանտրէ։

Երբոր մայրը պնդէ, կը կենայ կուլայ։ Նայեցէք իր պատկերին, և խոստովանեցէք որ անկարելի է իրմէ աւելի անշնորհք տղայ մը երեւակայել։

Իր եղունգներն ալ միշտ սեւ ու աղտոտ են, որովհետեւ կտրել չի տար մայրիկին, ու ձեռքերն ալ չի լուար։

Առջի գիշեր, Աշոտ պոռալով արթնցաւ քունէն։

—Հասէք, ազատեցէք զիս, կը ճուար լալով։

Մայրը իր քով վազեց շուտ մը։ Խեղճ կինը շատ դող ելած էր։

—Ի՞նչ է ան, Աշոտ, ի՞նչ եղար, ինչո՞ւ վախցար, հարցուց։

Այն ատեն, Աշոտ պատմեց թէ երազին մէջ սոսկալի բան մը տեսած էր։

Տեսածը իրեն պէս պզտիկ տղայ մըն էր, և այդ տղուն մազերը այնքա՜ն երկար էին որ մինչեւ ոտքերը կը հասնէին։ Կարծես ծնելէն ի վեր բնաւ չէր կտրած ու չէր սանտրած զանոնք։

Բայց Աշոտի վախ տուողը այդ մազերը չէին։

Երազին մէջ տեսած տղան խոշոր, շատ խոշոր եղունգներ ունէր։ Փուշերու պէս տնկուած էին մատուներուն ծայրը, և մայրիկին ասեղներուն պէս սուր էին։

Աշոտ անանկ կարծած էր որ այդ տղան իրեն կը մօտենայ և իր սուր եղունգները իր միսը պիտի խոթէ։

Ահա ասոր համար վախցած ու արթնցած էր։

— Բայց տղա՛ս, ըսաւ մայրիկը, դուն ալ քու մազերդ չես սանտրեր, և եղունգներդ կտրել չես տար։

«Ինչպէս որ դուն վախցար՝ այդ տղան տեսնելով երազիդ մէջ, անանկ ալ ընկերներդ կը վախնան, քեզ իրենց քով տեսնելով։

«Անոնք քեզ չեն սիրեր և քեզմէ կը փախչին։»

Հարցումներ նիւթին վրայ (Գրքոյկը գոց). — Ի՞նչ տեսակ տղայ էր Աշոտ. — Ի՞նչ տեսաւ երազին մէջ, եւ ինչո՞ւ վախցաւ. — Կրկնեցէք Աշոտի մայրիկին ըսածները, եւ ըսէք թէ Աշոտ անկէ ետքը ի՞նչ պիտի ընէ։

21. ՀԱՒԿԻԹԻՆ ԿՈՂՈՎԸ

(ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԱՌԱՆՑ ՆԻՒԹԻ)



Հարցումներ. — Ահա Մանուկ եղնարանը դուռ է պատին դէմ եւ վեր կ'ելլէ. ի՞նչ պիտի ընէր. ի՞նչ պատահեցաւ. ի՞նչ եղաւ հաւկիթին կողովը. ի՞նչ եղան հաւկիթները. եղնարանը ի՞նչ եղաւ. ինչո՞ւ Մանուկ այլափոխուեւ է. ի՞նչ կը վազէ դէմքին ու բազուկներուն:

---

22. ՔՕԹՕԹՆ ՈՒ ԲՐԴՈՏԸ

Քօթօթն ու Բրդոտը մեր սիրականներն են և մեր տան մէջ կը բնակին։ Քօթօթ՝ մեր շունն է, Բրդոտ՝ մեր կատուն։

Բայց շատ գէշ ընկերներ են երկուքն ալ։ Երբ Բրդոտին կերակուր կու տանք, Քօթօթ

և իր ձագը չեն թողուր որ ուտէ։ Իսկ երբ Քօթօթին կերակուր կու տանք, Բրդոտն է որ կ'երթայ անոնց կերակուրը կը լափէ։

Եւ ահա կռիւ մըն է կը սկսի։ Քօթօթ աղուոր ակռաներ ունի, լաւ կը խածնէ։ Բրդոտ սուր ճանկեր ունի, լաւ կը ճանկէ։ Շուտով երկուքն ալ կը ճուռան։

Ամէն անգամ որ Քօթօթն ու Բրդոտը կը կռուին, կը վազեմ կ'երթամ իրենց քով։ Այնքան զուարճալի են երկուքն ալ, որ իրենց կզուրտիլը տեսնելով, կը մարիմ խընդալէն։

«Միաւ», կ'ընէ Բրդոտը, և ճանկը կը նետէ։ «Հաւ, հաւ», կ'ընէ Քօթօթը և Բրդոտին թաթը կը խածնէ։

Այսպէս կը կռուին ամէն օր, շատ անգամ գիշերներն ալ։

Բայց այս գէշ ընկերները շատ օգտակար

անասուններ են։ Ես երկուքն ալ կը սիրեմ, որովհետեւ իրենց տրուած կերակուրին փոխարէն լաւ կը ծառայեն մեզի։

Քօթօթ կը հսկէ մեր տան վրայ. շատ քաջ շուն մըն է, և գողերը կը վախնան իր գտնուած տեղը մտնելու։

Իսկ Բրդոտ՝ մուկերուն թշնամին է, չի թողուր որ անոնք իրենց ծակէն դուրս ելլեն և մեզի վնաս հասցնեն։

Երբ Քօթօթն ու Բրդոտը կը կռուին, հայրիկս ինծի ցոյց կուտայ զանոնք ու կ'ըսէ.

—Չի բաւեր մաքուր կամ աշխատասէր ըլլալ. պէտք է լաւ ընկերներ ըլլալ։ Ով որ ընկերոջը հետ լաւ վարուի, իրեն հետ ալ լաւ կը վարուին։

Հարցումներ նիւթին վրայ (Դիրքը գոց). — Քանի՞ տեսակ ընկերներ են Քօթօթն ու Բրդոտը։ — Քանի՞ ծառայութիւններ կը մատուցանեն մեզի. — Ինչո՞ւ պէտք է լաւ ընկերներ ըլլալ. — Երբ գող տեսնէ՝ շունը ի՞նչ կ'ընէ. — Հապա փիսի՞կը՝ երբ մուկ մը տեսնէ։

Հարցումներ պատկերներուն վրայ (Դիրքը բաց)։ **Ա. Պատկեր.** Քանի՞ տեսակ առարկաներ կը տեսնէք պատկերին մէջ. — Բրդոտը ինչի՞ մէջեն կ'ուզէ կերակուրը. — Ո՞ւր կը գտնուի այդ առարկան։ **Բ. Պատկեր.** — Քանի՞ հոգի կը տեսնուին պատկերին մէջ. — Ո՞վ կրնան ըլլալ։ **Գ. Պատկեր.** — Բրդոտ ո՞ր ոտքով կը ճանկէ Քօթօթի աչքը. — Քօթօթ Բրդոտի ո՞ր թաթը խածեր է։

23. ՏՂՈՒՆ ՔԱԶԸ ԿԸ ՍԻՐՈՒԻ

(ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ)

Օր մը, Պետրոս, վազելով
քարի մը զարնուեցաւ։
Անփորձ էր, բայց քաջասիրտ.
բընաւ չը յայտնեց իր ցաւ,
Շարունակեց իր խաղը,
որպէս դի մօրն իր բարի
Սրտիկը դող ելլելով,
հանգիստը չը խանգարուի։
Ճակտին վրայ ուռեցք մը կար.
ինք կը խնդար անտարբեր,
«Բան մը չը կայ», ըսելով՝
լալկան քոյրը կը խաբէր։

— «Ապրիս, տըղաս, ըսաւ հայրն,
այդ ուռեցքովդ, իրաւ որ,
Քաջութեանդ ապացոյց,
դուն կ'երեւաս շատ աղուոր»։

24. ԿԱՐԹԸ ԵՒ ՁԿՆԻԿՆԵՐԸ

Ձկնորսները կարթը իջեցուցեր էին ծովն ի վար։ Ասեղին ծայրն ալ աղուորիկ որդ մը դրեր էին։

Ձկնիկները՝ որդը տեսան թէ չէ, բերաննին բացին և վազեցին վրան։ Ամէնքն ալ կը նայէին որ առաջ հասնին և որդը իրենք լափեն։

Բայց մայր ձուկը կեցուց զանոնք։

— Գոցեցէք բերաննիդ, ըսաւ անոնց, նախ հասկցէք թէ ի՞նչ է, և վերջը կերէք։

— Մայր, ըսին ձկնիկները, աղուորիկ որդ մըն է. բարի մարդիկ վար իջեցուցեր են որ ուտենք։

Մայր ձուկը խնդաց իր պարզամիտ ձագերուն վրայ, և ըսաւ.

— Տղաքս, մարդիկ ձեզ սիրելնուն համար չէ որ վար իջեցուցեր են այս որդը։ Եթէ ուշադրութեամբ նայիք՝ պիտի տեսնէք որ որդը ասեղի մը անցուած է։ Կլլելնուդ պէս, ասեղը բերաննիդ պիտի մտնէ, և ահա ձեզ վեր պիտի քաշեն։

— Բայց մեզ ի՞նչ պիտի ընեն, մայր։

— Պիտի սակեն, տապակին մէջ պիտի դնեն և իւղով պիտի տապակեն։

— Ու տապակելէ վերջ...

— Տապկելէ վերջ ալ փառաւոր մը պիտի ուտեն. ձեր փուշերն ալ փխսիկին պիտի տան որ ան ալ խնջոյքէն բաժին ունենայ։

Այս որ լսեցին, ձկնիկները շուտ շուտ փախան որդին քովէն։

Բայց մայր ձուկը կանչեց զանոնք և ըսաւ.

— Ինչո՞ւ կը փախիք, եկէք, դեռ ըսելիք ունիմ։ Այս որդին մէկ կտորը կրնաք ուտել։ Մի դպչիք այն մասին որ ասեղին պլլուած է. բայց անկէ վար երկարող մասը զգուշութեամբ կրնաք փրցնել և ուտել։

Յետոյ, մայր ձուկը թևովը ցոյց տուաւ ուտուելիք մասը։ Ձկնիկները փրցուցին այդ կտորը և աղուոր մը կերան։

Ձկնորսները դեռ կը սպասեն որ ձուկ բռնեն։ Կարթը միշտ լեցուն վար կ'իջնէ և պարապ վեր կ'ելլէ։

Ձկնիկները ազատեցան, որովհետև հնազանդեցան իրենց մօրը։

Հարցումներ նիւթին վրայ (Գիրքը գոց) Ի՞նչ տեսակ առարկայ է կարթը. — Ինչո՞վ շինուած է, ի՞նչ մասեր ունի. — Ուրիշ ի՞նչ բանով ձուկ կ'որսան. — Ձկնիկները ի՞նչ շահեցան իրենց մօրը հնազանդելով։

Հարցումներ պատկերին վրայ (Գիրքը բաց). — Քանի՞ ձուկ կայ պատկերին մէջ, — Ո՞րն է մայր ձուկը, ո՞րն է հայր ձուկը, որո՞նք են պզտիկները. — Ինչէ՞ն ճանչցաք զանոնք. — Կարթին ո՞ր մասերը կ'երեւան, — Ո՞րն է ասեղը. — Ո՞րն է որդը—Ո՞րն է որդին ուտուելիք մասը։

---

25. ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ

Աշունը եկեր էր, ծառերուն տերևները սկսած էին թափիլ, անձրև կու գար, խոտերը

կը դեղնէին, և օրը օրի աւելի ցուրտ կը դառնար։

Մայր նապաստակն ու հայր նապաստակը նստեր կը խօսէին։

— Գիտե՞ս, կ'ըսէր մայր նապաստակը, այսօր

լրագիր մը անցաւ ձեռքս, նստայ կարդացի. որսի եղանակը սկսած է, գրեր էին. վաղը միւս օր շատ մը որսորդներ պիտի գան այս կողմը։



— Վա՜խ, ըսաւ հայր նապաստակը, նորէն ծակ ու ծուկ պիտի փախչինք, և չպիտի կրնանք ազատ ազատ պտտիլ անտառին մէջ։ Հապա մեր պզտիկը...։ Խեղճը դեռ անփորձ է, կը վախնամ որ գլխուն փորձանք մը գայ։

— Հոգ մի՛ ըներ, ըսաւ մայր նապաստակը, հիմայ պիտի կանչեմ և խրատ պիտի տամ որ զգուշութիւն ընէ։

Զագուկ նապաստակը նստեր կը կարդար։

— Եկուր, իմ սիրունիկ ձագուկս, ըսաւ մայր նապաստակը։

Ու պզտիկ սատանորդին ցատկրտելով մօրը քով վազեց։

— Եկուր, և խոշոր խոշոր բաց ականջներդ որ լաւ մը մտիկ ընես, ըսաւ մայրը։

Փոքրիկ խաշնարածը

Ձագուկը ականջները խաղցուց, հասկըցընելով որ ուշադրութեամբ մտիկ կ'ընէ։

Եւ ահա թէ ինչ ըսաւ մայր նապաստակը.

— Աղուորիկ ձագուկս, գիտցած ըլլաս, որսորդներ պիտի գան այս կողմերը, պէտք է զգուշանաս։

«Դուն դեռ պզտիկ ես, չես գիտեր թէ որսորդը ինչ է։

«Որսորդը չար մարդ մըն է որ շատ կը սիրէ նապաստակի միսը։

«Ձեռքը հրացան մը ունի, որուն գնդակը եթէ քեզի հանդիպի, անմիջապէս կը մեռցնէ։

«Ասկէ զատ, շուն մըն ալ կ'ունենայ, և այդ անպիտան կենդանին աւելի վտանգաւոր է։ Շատ անգամ որսորդը չի կրնար լաւ նշան առնել և քեզ սպաննել, բայց շունին հոտառութիւնը սուր է, շուտով կը գտնէ պահուած տեղդ, և ականջներէդ խածնելով տիրոջը կը տանի։

«Քեզի խրատ ըլլայ, մեր քովէն չբաժնուիս, և մինակդ չպտտիս։ Վերջէն կը զղջաս։

Անցան օրեր, որսորդներ եկան, նապաստակներուն քէյֆը աւրուեցաւ։ Ալ չկային ազատ համարձակ պտոյտները. դողը մտած էր սրտերնին, կը վախնային խեղճերը։

Գիշեր մըն ալ, ձագուկ նապաստակը երևան չելաւ։

Առտուն՝ կամացուկ մը փախեր էր ծնողքին քովէն։ Շատ հետաքրքիր էր. ուզած էր տեսնել թէ ի՞նչ տեսակ մարդ է որսորդը։ Բայց հազիւ անտառին մէջ՝ ճամբուն վրայ ելեր էր, բաֆ... հրացանն է պայթեցաւ, և գնդակը փորը մտաւ։

— Մ՛յ, մ՛յ, պոռաց նապաստակը, ուզեց փախչիլ, բայց վիրաւորուած էր, չկրցաւ։ Յետոյ շունը եկաւ խածաւ ականջներէն, և տարաւ տիրոջը յանձնեց։

Այն իրիկունը, նապաստակը սանին մէջ դրին, աղուոր մը եփեցին ու կերան։

Խեղճ ծնողքը կուլան դեռ։

Հարցումներ նիւթին վրայ. (Գիրքը գոց). — Ի՞նչ է որսորդը, ի՞նչ կ'որսայ, ի՞նչ կ'ընենի որսացած կենդանիները. — Աշնան մէջ ի՞նչ կ'ըղան ծառերը, խոտերը, ծաղիկները, օդը. — Ձագուկ նապաստակը ինչո՞ւ սպանուեցաւ։

Հարցումներ պատկերներուն վրայ (Գիրքը բաց). — **Ա. Պատկեր.** — Ինկած տերևները ո՞ր եղանակին նշանն են. — Ի՞նչ գոյն ունին այդ տերևները. — Առաջ ի՞նչ գոյն ունէին. — Մէյ մը ալ ե՞րբ պիտի բուսնին. — Ուրիշ ինչե՞ր պիտի բուսնին անոնց հետ։

---

26. — ԾԱՌԵՐԸ ԾԱՂԿԵՐ ԵՆ

(ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԱՌԱՆՑ ՆԻՒԹԻ)

Հարցումներ. — Քանի՞ աղջիկ կան պատկերին վրայ. — Ճիւղը բռնողը ո՞ր կողմը կը գտնուի, աջ թէ ձախ. — Ճիւղի մը վրայ ինչե՞ր կը գտնուին. — Գետինը ինչո՞վ ծածկուած է. — Ինչո՞ւ չենք տեսներ աղջիկներուն ոտքերը. — Ծառերը ե՞րբ կը ծաղկին, եւ ծաղկելէ վերջ ի՞նչ կուտան մեզի։

27. ԼԱԼԿԱՆ ՊԷՊԷՆ

(ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ)

Դէ՛, դէ՛, տա՛ն, տա՛ն, պօ՛, պօ՛, թիւ՛...
Կը ճըրճըրայ Արշաւիր,
Մարդուն սիրտը կը ճաթի.
Թէ կրնաս՝ բան հասկցիր։

Ճո՛ր, ճո՛ր, պա՛ր, պա՛ր, հրապալայ՛...
Օրրէ՛, երգէ՛, յոգնէ՛ դուն,
Պէպէն կուլայ ու կուլայ
Ճըրճըրալով, միշտ արթուն։

Ի՞նչ գլխու ցաւ, ինչ փորձանք,
Ահա նորէն կը ճըչէ,
Գիշեր, առտու թէ ցերեկ,
Խենթենալը բան մը չէ։

Քուրիկներըս իմ երկու,
Մագթաղինէն ու Շուշան,
Կը սիրեմ ես։ Թէ ինչո՞ւ՝
Նայեցէք, միշտ կը խընդան։

28. — ՍԱՏԱՆՈՐԴԻ ԱՂՈՒԷՍԸ

(ԱՌԱՋԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)

Աղուէսը անօթեցեր, լեզուն դուրս ձգեր կը պտտէր։ Աչքերը արթուն, ականջները սրած, կը նայէր թէ ուրկէ՞ պիտի գայ որսը։

Բայց հաւերը փախեր պահուըտեր էին հաւնոցին մէջ, բադերը մտեր էին

ջուրը, սագ տատիկն ալ կը հսկէր հաւնոցին մօտ, որ ձայն տայ տնեցիներուն։

Սով էր խեղճ աղուէսին համար. կը վախնար որ անօթի կը մեռնի. քիչ էր մնացեր որ նստի լայ իր վիճակին վրայ։

Սոված աղուէսը այդպէս յուսահատ կը պտտէր, երբ յանկարծ տեսաւ ագռաւը, որ պանիրի խոշոր կտոր մը կտցեր կը թռըցընէր։

Աղուէսին աչուրները շողացին. ինչ համով պանիր էր արդեօք ագռաւին գողցածը։

— Բախտաւոր է անպիտանը որ թեւեր ունի, մտածեց. կը գողնայ ու կը թռչի. եթէ այդ թեւերը իմս ըլլային, ես ամբողջ աշխարհը կը թալէի։

Յետոյ, ուրիշ բան մը անցաւ միտքէն.

— Եթէ ան թեւեր ունի, ես ալ խելք ունիմ, մտածեց, նայինք կրնանք սա պանիրը մենք ուտել։

Ու ձայն տուաւ ագռաւին.

— Է՛, ինծի՛ նայէ, ագռաւ քուրիկ, ո՞ւր կը վազես ատանկ. մէյ մը կեցիր...

Բայց ագռաւը կենալու միտք չունէր։

— Գործ ունիմ, չեմ կրնար, ըսաւ։

Եւ գնաց ծառի մը վրայ թառեցաւ։

Աղուէսը շուտ մը վազեց հասաւ ծառին տակ։ Ագռաւը պանիրը ճիւղի մը վրայ դրեր՝ լաւ մը սեղմեր էր ոտուքներով, վախնալով որ վար կ'իյնայ։

— Ագռաւ քուրիկ, ըսաւ աղուէսը, մէյ մը չկեցար որ խօսէինք։

— Այդքան կարեւոր էր ըսելիքդ։

— Շատ կարեւոր, ագռաւ քուրիկ... առջի

օր նստեր էինք քանի մը ընկերներ, երբ սոխակ մը եկաւ մեր մօտ... անպիտանը կ'ըսէր թէ իրեն չափ աղուոր երգող թռչուն չկայ ամբողջ աշխարհի մէջ... բայց անդիէն գայլը պնդեց թէ ինք լսած է քու երգելդ, և թէ դուն ես ամէնէն աղուոր երգող թռչունը... կռիւ մըն է փըրթաւ... իսկ ընկերներս սոխակին իրաւունք տուին...

— Վերջը, հարցուց ագռաւը, որ գայլին գնահատութիւնը լսելով, սկսած էր հպարտանալ։

— Վերջը սա եղաւ որ, ըսաւ աղուէսը, քիչ մնաց ծեծկուէին... տեսայ որ գէշ պիտի ըլլայ, մէջերնին մտայ և ըսի... ինչու կը կռուիք, ես կ'երթամ կը գտնեմ ագռաւը, երգել կու տամ, կուգամ ձեզի կ'ըսեմ թէ ո՞վ ամէնէն լաւ կ'երգէ... բոլորն ալ հաւանեցան, և ահա եկեր նստեր եմ այստեղ, ականջներս բացած կը սպասեմ... երգէ, ագռաւ քուրիկ, երգէ որ ընկերներուս վէճը վերջ գտնէ...

Տիմար ագռաւը հաւատաց աղուէսին խօսքերուն։

— Գայլը իրաւունք ունի, ըսաւ, պիտի տեսնես որ յիմար սոխակը իմ կէսիս չափ անգամ չի կրնար երգել։

Եւ սկսաւ իր անախորժ ձայնով կրկռալ.

— Կռռ, կռռ, կռռհ, կռռհ...

Ոտուրներով ալ չափ կու տար երգին։

Աղուէսը վարէն՝ աչուքները պանիրին՝ կը սպասէր.

— Օ՜հ, ի՞նչ անուշ երգ, ի՞նչ անուշ երգ, կ'ըսէր, երգէ, ագռաւ քուրիկ, երգէ, ցատկէ, սոխակը ոչ թէ քու կէսիդ, քառորդիդ չափ ալ ձայն չունի։

Եւ ագռաւը կը շարունակէր ցատկըրտել ու կրկռալ։

Բայց մինչդեռ այդպէս կը ցատկրտէր, պանիրն է սահեցաւ ինկաւ աղուէսին կռնակին վրայ։

Ցիմար ագռաւը դեռ երգը չէր վերջացուցած, երբ աղուէսը արդէն իսկ լափեր էր պանիրը, որ բերնին շողիքները վազցնէր, ու կը հեռանար կ'երթար՝ ըսելով.

— Շատ աղուոր կ'երգես, ագռաւ քուրիկ, շատ աղուոր... բայց հաւատա՛ որ պանիրը աւելի աղուոր էր...

Հարցումներ նիւթին վրայ (Դերքը գոց). — Ի՞նչ տեսակ կենդանիներ են աղուէսն ու ագռաւը.—Ի՞նչ տարբերութիւն ունին իրարմէ.—Ի՞նչ կենդանիներու թշնամի է աղուէսը.—Ագռաւը ո՞ր եղանակին կու գայ մեր մօտ.—Ի՞նչ գոյն ունի, ի՞նչ կ'ուտէ:

Հարցումներ պատկերներուն վրայ (Դերքը բաց). — **Բ. եւ Գ. Պատկերներ.** — Ագռաւը ի՞նչ կ'ընէ Բ. պատկերին մէջ. — Ի՞նչ կ'ընէ Գ. պատկերին մէջ. — Հապա աղուէ՞սը. — Ագռաւին եւ աղուէսին գաս ուրիշ ինչե՞ր կան պատկերներուն վրայ:

29. ՄԻՀՐԱՆ ՊԱՏԿԵՐ ԿԸ ԳԾԷ

Միհրան միշտ պատկեր կը գծէ, բայց ալ պատերը չի սեւցներ. ալ մինակ թուղթի վրայ կը գծէ, և մայրիկն ալ չի պատժեր զինքը։

Նայեցէք, ինչ դիւրութեամբ կը գծէ։

Ահա շիտակ գիծ մը քաշեց, տակէն ալ կոր գիծ մը, յետոյ՝ վրայէն՝ ուրիշ պզտիկ կոր գիծ մը, դրաւ նաև ոտքեր, սեւցուց գծածը, և թռչուն մը ելաւ մէջտեղ։

Միհրան առաւ ուրիշ թուղթ մը, և կոր գիծ մը գծեց։

Ըսէք թէ ուրիշ ինչ գիծեր քաշեց որ պատկերը նմանեցաւ սագի։

Ահա ուրիշ շիտակ գիծ մըն ալ զոր Միհրան քաշեր է թուղթին վրայ։ Այս անգամ՝ հաւ մը պիտի գծէ։

Ի՞նչ գիծեր քաշեց որ յաջողեցաւ։

Միհրան գոհ է որ պատկերները կը յաջողին։ Հիմայ մատիտը նորէն ձեռքն է, գլուխը կախեր կը գծէ։

Նայեցէք պատկերին, ըսէք թէ ի՞նչ գծեց, և ի՞նչ գիծերու պէտք ունեցաւ այդ պատկերը գծելու համար։



Մայրիկը տեսաւ պատկերները, ուրախացաւ և շօքոլայի խոշոր կտոր մը տուաւ Միհրանին։

Բայց Միհրան աշխատասէր է, կ'ուզէ շարունակել։

Ահա դուրսէն ձի մը կ'անցնի սուրալով։ Միհրան ալ ձի մը պիտի գծէ։ Քանի մը վայրկեան վերջ՝ պատկերը պատրաստ է։

Ինչպէ՞ս եղաւ որ Միհրան այդքան շուտով գծեց ձին։

Հիմայ Միհրան սև ու այլանդակ պատկեր մըն է շիներ։ Հաստ թաթեր, պզտիկ ականջներ, խոշոր գլուխ, կարճ պոչ։ Ի՞նչ կենդանի

է աս, կենդանիներու որ տեսակին կը պատկանի, մորթը ինչով ծածկուած է, ինչի՞ կը ծառայէ։

Միհրան ինչպէ՞ս գծեց զայն։

Միհրան դեռ ուրիշ անգամ ալ պատկերներ պիտի գծէ, և նոր պատկերներ։

Ուսուցիչներուն.—Այս դասին առթիւ՝ ուսուցիչները կրնան գիծերու տեսակին եւ յատկութեանց մասին տարրական ծանօրութիւն մը տալ աշակերտներուն, նկատի առնելով անոնց ըմբռնողութեան աստիճանը:

---

30. ՁԻՆ

Ընտանի կենդանիներուն ամէնէն օգտակարներէն մէկն է ձին։

Մարգար հօրեղբայրը դէմի գիւղը պիտի երթայ. ճամբան հեռու է, և ինք ստիպուած է շուտով հասնիլ։ Բայց հոգը չէ. կը ցատկէ ձիուն վրայ և կը հեռանայ արագ արագ։ Մարգար հօրեղբայրը թէ՛ շուտ կը հասնի, և թէ՛ չի յոգնիր։

Երէկ՝ գիւղը հիւանդ մը ունէինք. պէտք էր շուտով բժիշկ հասցնել, և բժիշկ գտնելու համար մինչև մօտի քաղաքը երթալ պէտք էր։

Շուտ մը ձին կառքին լծեցինք, և բժիշկը հասաւ ճիշտ ատենին։

Կիրակի օրը՝ Մարգար հօրեղբայրը երկու խոշոր սակառներ կը դնէ ձիուն վրայ, մենք ալ սակառներուն մէջ կը մտնենք, և ձին մեզ կը պտտցնէ գիւղին բոլորտիքը։

Շատ բարի կենդանի մըն է ձին, բայց երբ չար տղաք կ'երթան իր պոչը կը քաշեն, այն ատեն կը բարկանայ և աքացի կը զարնէ։ Վայ է եկեր աքացին ուտողին գլխուն։ Եթէ չմեռնի՝ շիտակը շատ բախտաւոր է։

Ձին ինքզինքը իր ետեւի ոտքերով կը պաշտպանէ։ Անօթի գայլեր երբ իր վրայ յարձակին, աքացիի մէկ հատիկ հարուածով մը կը սպաննէ զանոնք։

Մարդար հօրեղբայրը ձին պայտարներու կը տանի և անոր ոտուընեներուն պայտ դամել կու տայ, որպէս զի սմբակները քարերուն քսուելով չմաշին։

Կենդանիներուն մէջ ձին գրեթէ մարդոց ամէնէն հին բարեկամն է։ Հին ատենուան մարդիկը շատ շուտ հասկցած են ձիուն օգտակարութիւնը և դայն ընտանեցուցած են։



Ձին շատ կը սիրէ իր տէրերը։ Երբոր զանոնք տեսնէ՝ անուշ ձայնով մը կը վրնջէ։

Արաբական ձիերը ամէնէն ազնիւ տեսակներէն են։ Երբեմն, անապատին մէջ, իրենց տէրը կ'իյնայ կը մեռնի, և իրենը չեն հեռանար անոր քովէն. անօթի կը մեռնին ու չեն բաժնուիր իրենց տիրոջմէն։

Շատ տեղեր՝ ձիուն միսը կ'ուտեն։

Ձին արագ վազող կենդանի մըն է։ Մարդիկ կան՝ որոնք ձին կը մեծցնեն մի՛ միայն վազցնելով իրարու հետ մրցել տալու համար։ Այդ տեսակ ձիերը ամէնէն ազնիւ տեսակներէն կ'ընտրուին և հարիւրաւոր ոսկիներ կ'արժեն։

Հարցումներ նիւրին վրայ (Դիրքը դոց). — Բանի՞ տեսակ ընտանի կենդանի գիտիք. ի՞նչ օգուտ ունին մեզի. — Ձիուն ո՞ր մասին պայտ կը դամեն. ինչո՞ւ — Ո՞վ կը գամէ պայտը. — Ի՞նչ տեսակ առարկայ է. — Սանձը ի՞նչ է. — Ինչո՞ւ համար ձին կը սանձեն. — Անապատը ի՞նչ է։

Հարցումներ պատկերներուն վրայ (Դիրքը բաց). — **Ա. Պատկեր.** — Ո՞ւր կը գտնուին ձիերը. — Բանի՞ հատ են. — Ի՞նչ կ'ընեն. — Ի՞նչի մէջեն կ'ուտեն. — **Բ. Պատկեր.** — Ի՞նչ կը տեսնիք պատկերին մէջ. — Դայլը ինչո՞վ այդպէս վեր նետուեցաւ։ **Գ. Պատկեր.** — Ի՞նչ է եղեր Արաբը. — Ինչո՞ւ կեցեր է ձին. — Ո՞ւր կը գտնուին երկուքն ալ։

31. ԱՆՏԱՌԻՆ ՄԷՋ

(ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԱՌԱՆՑ ՆԻՒԹԻ)

Հարցումներ. — *Քանի՞ տեսակ կենդանիներ կը գտնուին պատկերին մէջ.— Ուրիշ ինչե՞ր կան.— Ի՞նչ գիտէք այդ կենդանիներուն վրայ:*



32. ՊԱՐՏԷԶԻՆ ՄԷՋ

(ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ)

Ծառուղիին խորը թաց
Որ աւազով է ծածկուած,
Երկու սիրուն աղջիկներ՝
Կատարինէն ու Վերգին՝
Երկար բարակ կ'աշխատին,
Շինեն փոքրիկ ածուներ։

Եղանակն է տաք, գարո՛ւն...
Երբ օրն ըլլայ իրիկուն,
Ցնցուղ մը ջուր պարպելով
Լրբացընեն գործերնին,
Ու կը պոռան միասին.
«Մայրիկ, եկո՛ւր, տե՛ս շուտով»։

---

33. ԱՍՏՂԵՐԸ

Գիշեր է, մութը ծածկեր է ամէն կողմ. հինգ տասը քայլ հեռուէն իրար չենք տեսներ։

Ո՞ւր են այն շէնքերը որոնք կ'երեւային ցերեկը, երբ լոյս էր։ Ո՞ւր են նաև ծառերը, բոյսերը։ Ամէնքն ալ իրենց տեղն են, բայց չենք կրնար տեսնել զանոնք, որովհետև մութը իջեր է անոնց վրայ։

Պատկերներով ծածկուած թուղթի մը վրայ կարծես սև մելան թափեր է. բոլոր պատկերներն ալ թուղթին վրայ են, բայց չեն տեսնուիր։

Երկինքն ալ որ պայծառ կապոյտ էր, ահա սեփ սև է։ Բայց պզտիկ լոյսեր կան անոր վրայ, և այնքան շատ, որ կարելի չէ զանոնք համրել։

Երբոր անոնց նայինք՝ հազիւ գնդասեղի գլխու մը չափ մեծ կ'երեւան։ Բայց անոնք մեր աշխարհէն աւելի խոշոր են։

Քանի՞ առարկայ մը մեզմէ հեռացնեն, այնքան պզտիկ կ'երեւայ մեզի։ Աստղերն ալ մեզմէ շատ հեռու են, և ատոր համար է որ այդքան պզտիկ կ'երեւան։

Իրենց լոյսն ալ արեւին լոյսին չափ զօրաւոր է, բայց տկար կ'երեւայ, որովհետև արեւէն շատ հեռու կը գտնուի։

Որպէս զի աստղերը տեսնենք՝ պէտք է որ օրը իրիկուն ըլլայ, մութը իջնէ, գիշերը սկսի։

Առաջ ամէնէն մօտը գտնուող աստղերը կը տեսնենք. յետոյ ամէնէն խոշորներն ալ. կը սկսինք համրել՝ մէկ, երկու, երեք, հինգ, տասը, բայց ահա շուտով ամէնը մէկ կը տեսնուին և ալ չենք կրնար համրել զանոնք։

Առտուն, արեւին առաջին ճառագայթները երեւալուն պէս, ամէնքն ալ չեն տեսնուիր։ Գիշերն ալ՝ թեթեւ ամպ մը անգամ կը ծածկէ զանոնք։

Բայց չկարծէք որ երբ աստղերը չեն տեսնուիր՝ անոնց լոյսը կը մարի։ Արեւին պէս՝ աստղերուն ալ լոյսը չի մարիր։

Հարցումներ Գիւրին վրայ (Դիրքը գոց).—Ինչո՞ւ հեռուն գտնուող առարկայ մը պզտիկ, եւ մօտը գտնուող առարկայ մը մեծ կ'երեւայ.—Ե՞րբ կը հասնի գիշերը.—Ի՞նչ փոփոխութիւններ կ'ըլլան գիշերը. — Ի՞նչ կը պակսի գիշերը եւ ի՞նչ կը վառնի այդ պակասածը գտնելու համար.— Ինչո՞ւ արեւին լոյսով աստղերը չեն տեսնուիր:

Հարցումներ պատկերին վրայ (Դիրքը բաց). — Քանի՞ հոգի կը տեսնիք պատկերին մէջ.—Մանչը ո՞ւր կեցեր է. իսկ աղջիկը ո՞ր կողմը.—Ի՞նչ ցոյց կուտայ հայրերնին.—Քանի՞ աստղեր կը տեսնուին:

34. ՍԱՏԱՆՈՐԴԻ ԱՂՈՒԷՍԸ

(ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)

Գիշեր մը աղուէսը մեր դրացի Մարիամ խաթունին հաւնոցը մտեր, հաւերը խեղդեր, լաւ մը կշտացեր էր և իր որջը կը դառնար, երբ ճամբան ծարաւցաւ։

Անպիտանին չար բախտէն ալ ճամբուն վրայ ոչ գետ կար, ոչ աղբիւր։ Քանի շաբաթէ ի վեր անձրեւ չէր եկած և բոլոր փոսերը չոր էին։

Աղուէսին հոգին կ'ելլէր ծարաւէն, լեզուն դուրս էր ձգեր, կը հեւար ու կը հեւար, երբ յանկարծ շունչ առաւ։

Ջրհոր մը տեսած էր։ Մութը շատոնց իջած էր, բայց աղուէսին աչուքները՝ կատուին աչուքներուն պէս՝ մութին մէջ ալ կը տեսնէին։

— Փառք Աստուծոյ, ազատեցանք, ըսաւ, վազեց հասաւ Ջրհորին մօտ, ցատկեց նստաւ եզերքը և պոչը մէջը երկնցուց, հասկնալու համար որ Ջուրը շատ էր թէ քիչ։

Երբ պոչը դուրս քաշեց՝ չոր էր։

— Էհ, ըսաւ, շատ Ջուր չկայ որ պոչս չը թրջեցաւ, ցատկենք վար։

Եւ մէկ ոստումով Ջրհորն ի վար ցատկեց։

Բայց օրը ձախորդ էր աղուէսին համար։ Ջրհորը շատ խորունկ էր, և քիչ մնաց որ ոսկորները կոտրտին։

Եթէ ամէնը ատ ըլլար՝ աղուէսը նորէն փառք պիտի տար։ Ջրհորն ալ չոր էր։ Սատանորդին քիթը ամէն կողմ պտտցուց, բայց Ջուրի կաթիլ մը անգամ չգտաւ։

Դողն է մտաւ աղուէսին փորը։ Ջրհորին պատը բարձր էր, աղուէսը չէր կրնար վեր ցատկել և օձիգը ազատել։

— Հապա եթէ գիւղացիները գան և գիս հոս տեսնեն, կը մտածէր, խերս կ'անիծեն։

Ալ մոռցած էր ծարաւը, ազատելու միջոց մը կը խորհէր։

Առտու եղաւ, արեւը ծագեցաւ, լոյսը տարածուեցաւ ամէն կողմ, և աղուէսը կը մնար Ջրհորին մէջ։ Տխուր էր խեղճը։

— Վերջս հասաւ, կը մտածէր։

Յանկարծ մօրուսաւոր գլուխ մը ցցուեցաւ ջրհորին բերանը։ Աղուէսին սիրտը դփրտաց։ կարծեց որ մարդ մըն է, և արդէն իսկ ինքզինքը մեռած կը նկատէր, երբ վերէն, գլուխը սկսաւ խօսիլ։

— Է՛հ, աղուէս եղբայր, ջուր կա՞յ վարը։

Շունչ առաւ աղուէսը։ Երևցողը այծ մըն էր, որ ծարաւած ըլլալով ջուր կը փնտռէր։

Սատանորդի աղուէսը, հազիւ վախէն ազատած, շուտ մը գտաւ իր փնտռած միջոցը։

— Պատուական ջուր կայ, այծ եղբայր, ըսաւ, հաւատա որ կեանքիս մէջ այսքան անուշ ջուր չէի խմեր։

Այծը լսեց թէ չէ, շուտ մը ցատկեց վար։ Շատ ծարաւցած էր խեղճը, և աղուէսին խօսքերը բոլորովին աւելցուցած էին իր ծարաւը։

Բայց հազիւ թէ վար իջած էր, աղուէսը անոր կռնակը ցատկեց, յետոյ կոտոշներուն վրայ ելաւ, և այնտեղէն ալ նետուեցաւ ջրհորէն դուրս, ըսելով։

— Դուն կեցիր, այծ եղբայր, և ծարաւիդ համար հոգ մի ըներ։ Խօսք կուտամ որ ջուր գտնելուս պէս քեզի համար ալ պիտի խմեմ։

Տխմար այծը որ աղուէսէն խաբուեցաւ, դեռ ջրհորին մէջն է, ծարաւէն մեռնելու վրայ։

Հարցումներ նիւթին վրայ (Գիրքը գոց).—Որջը ի՞նչ է. — Որո՞նք որդի մէջ կը բնակին. —Որո՞նք բոյնի մէջ կը բնակին.—Աղուէսը ինչո՞ւ պոչը ջրհորին մէջ իջեցուց.—Ի՞նչ հասկցաւ այդ միջոցով.—Ինչո՞ւ գեսնի փոսերը չոր էին.—Աղուէսը ինչպէ՞ս կրցաւ ելնել ջրհորէն:

Հարցումներ պատկերներուն վրայ (Գիրքը բաց).—Ա. Պատկեր. —Ինչո՞ւ կը զանազանիք մուրին մէջ: Բ. Պատկեր. — Ի՞նչ ցոյց կուտան երեք տեսարանները:

---

35. ՄԱՐՏԻՐՈՍԻՆ ՔԻԹԸ

Զէ՞ք մեղքնար սա խեղճ Մարտիրոսը։

Ամէնքդ ալ գիտէք որ շատ աշխատասէր տղայ մըն էր, միշտ առաջին կ'ելլէր իր դասերուն մէջ։ Բայց շարունակ կը յանդիմանուէր վարժուհիէն։

Մարտիրոս լաւ տղայ մըն էր, բայց խոշոր թերութիւն մը ունէր։ Մատը միշտ քիթին մէջն էր, քիթը կը խառնէր։

Մէկ քանի անգամ վարժուհին ըսաւ իրեն.

— Մարտիրոս, մի՛ ըներ, մոռցիր այդ աղտոտ սովորութիւնը, վերջէն պիտի զղջաս... աղտոտ մատուրներդ քիթիդ մէջ խոթելով, օր

մը վերք մը պիտի բանաս հոն, և պիտի չարչարուիս... մայրիկդ ինչո՞ւ քեզի թաշկինակ կուտայ... թաշկինակը քիթիդ համար է... միայն անքաղաքավար մարդիկը քիթերնին մատով կը խնջեն կամ քիթերնին կը խառնեն։

Մարտիրոս քիչ մը ալ յամառ էր, շուտով չէր համոզուեր։

Յամառ ըլլալուն՝ խօսք մտիկ չընրաւ, շարունակեց խառնել քիթը, խառնեց, խառնեց, մինչեւ որ վարժուհիին ըսածը եղաւ։ Վերք մը ելաւ քիթին մէջ, և քիթը ուռեցաւ։

Ընկերները կը գանէին իրմէ, և հեռու կը փախչէին։

Խեղճ Մարտիրոս շատ տխուր էր, բայց իրաւունք չունէր գանգատելու, որովհետև ինք, մինակ ինք էր ատոր պատճառը։

Օր օրի քիթը ուռեցաւ, այնքան ուռեցաւ, մեծցաւ, խոշորցաւ ու ծանրցաւ որ չէր կրնար

տանիլ զայն։ Գլուխը վար կը ծռէր անոր ծանրութենէն։

Հայրը ստիպուեցաւ պզտիկ սայլակ մը շինել տալ, և Մարտիրոս՝ մինչև որ աղէկցաւ, այդ սայլակով կը կրէր իր քիթը։

Ընկերները կը խնդային իր վրայ, կը ծաղրէին իր քիթը։

Այդ փորձանքը պիտի գար գլխուն, եթէ վարժուհիին խօսքը մտիկ ըրած ըլլար։

Հարցումներ նիւթին վրայ (Դիրքը գոց). — Ի՞նչ պատահեցաւ Մարտիրոսի. — Մարտիրոս ինչո՞ւ չհրցաւ օգտուիլ վարժուհիին խրատեն. — Ի՞նչ բան է թաշկինակը. ինչի՞ շինուած է, մինակ ձեռա՞կ կ'ըլլայ, ինչի՞ կը գործածուի. — Սայլակը կառքի ո՞ր տեսակին պզտիկն է։

Հարցումներ պատկերներուն վրայ (Դիրքը բաց). — Մարտիրոս ինչ կ'ընէ երկու պատկերներուն մէջ. — Առաջին պատկերին մէջ Մարտիրոս ո՞ւր է, տո՞ւնը թէ փողոցին մէջ. — Իսկ ե՞րկրորդ պատկերին մէջ. — Ինչի՞ն կը հասկնամ։

36. ՄԱՄԻԿՆ ՈՒ ԻՐ ԽՈԶԸ
(ՎԱՐԺՈՒԹԻՒՆՂԱՌԱՆՑ ՆԻՒԹԻ)

Հարցուցմունք.—Ի՞նչ կը տեսնէր պատկերին մէջ.—Ի՞նչ տեսակ կենդանի է խոզը.—Մամիկին ո՞ր ձեռքին եւ ո՞ր մատին վրայ է մատանին. — Ի՞նչ կը ֆոչուի այդ մատը.— Ի՞նչ կը կոչուին միւս մատները:

37. ՍՏԱԽՕՍԻՆ ՊԱՏԻԺԸ

Ի՞նչ է ան, գիւղը իրար անցեր է, գիւղացիները մէյ մէկ բիր առեր, իրարու ձայն կու տան ու կը վազեն յիմարի պէս։

Ահա մէկ, երկու, հինգ, տասը, քսան եղան։

—Հասէք, կը պոռան ամէն կողմէ։

Եւ բիրը առնողը կը վազէ գիւղէն դուրս։

Ի՞նչ է եղեր, ո՞ւր կը վազեն։



Գիւղացիները կը վազեն, որովհետեւ գիւղին սագերը արածող պզտիկ հովիւին՝ Միհրանի ձայնը լսեցին։

—Վազեցէք, կը պոռար Միհրան, գայլը եկաւ, սագերը պիտի տանի։

Եւ գիւղացիք կը վազէին պոռալով, բիրերը ճօճելով։

Վազեցին վազեցին, վերջապէս հասան Միհրանի մօտ։ Բայց գայլ չկար մէջտեղ։

—Ո՞ւր է գայլը, փախա՞ւ, հարցուցին։
Միհրան ձայն չէր հաներ, կը խնդար։

Գիտէք ինչու կը խնդար Միհրան։
Անպիտանը խաբած էր գիւղացիները։ Գայլ չէր եկած սագերուն մօտ։
Միհրան պոռացած էր զբօսնելու համար։
—Էհ, ըսած էր ինքնիրեն, ձայն տանք սա միամիտ գեղջուկներուն, նայինք ինչպէ՞ս պիտի վազեն, լաւ մը կը խնդանք իրենց վրայ։
Ու կը խնդար ստախօս տղան։

Միհրան ուրիշ անգամ մըն ալ խաբեց խեղճ գիւղացիները։
Անոնք նորէն իրարու ձայն տուին, բիրերը առին, վազեցին գացին փոքրիկ հովիւին մօտ, կարծելով որ գայլը իրաւ սագերը կը տանի։
Բայց նորէն գայլ չգտան հոն։ Իսկ Միհրան, անոնց վրայ կը խնդար։ Գոհ էր որ անգամ մըն ալ խաբեց գեղջուկները, ու կը զուարճանար։

Բայց օր մը գայլը իրաւ եկաւ։ Անօթի գայլ մըն էր և սագերը իր ախորժակը կը գրգռէին։
Միհրան՝ գայլը տեսաւ թէ չէ՝ սկսաւ պոռալ բոլոր ոյժովը.
— Հասէք, գայլը եկաւ, սագերը պիտի տանի, շուտ հասէք։

Բայց գիւղացիները, երկու անգամ խաբուած ըլլալով, կարեւորութիւն չտուին Միհրանի

աղաղակներուն, կարծելով թէ նորէն զիրենք կը խաբէ։

Ոչ ոք տեղէն երերաց, ամէնքն ալ իրենց գործը շարունակեցին։

Խեղճ Միհրան...։ Միշտ կը պոռար, կոկորդը պատռելու չափ ուժով.

— Հասէք, Աստուծոյ սիրուն, գայլը եկաւ, ահա կը մօտենայ, սագերը պիտի տանի։

— Էհ, պոռայ եթէ բան գործ չունիս, կ'ըսէին գիւղացիները՝ անոր ձայնը առնելով, ալ անգամ մըն ալ չենք խաբուիր։

Եւ հանդարտ՝ իրենց աշխատութիւնը շարունակեցին, մինչդեռ Միհրան կը պոռար ու կը պոռար թէ գայլը սագերը կը տանի։

Իրաւ ալ՝ գայլը մտաւ սագերուն մէջ, և անոնցմէ ամէնէն պարարտը վիզէն խածնելով առաւ տարաւ։

Հարցումներ նիւթին վրայ (Գիրքը գոց). — Ի՞նչ տեսակ կենդանի է գայլը.—Ընդհանրապէս ո՞ր կենդանիներուն թշնամի է.— Գայլը մարդուն ալ կը վնասէ՞.—Միհրան ինչո՞ւ օգնութիւն չգտաւ գիւղացիներէն.—Գիւղացիները իրաւունք ունէի՞ն։

Հարցումներ պատկերներուն վրայ (Գիրքը բաց).—Ի՞նչ կը տեսնէք Ա. պատկերին մէջ.—Գայլին, սագերուն ու Միհրանին զատ ինչե՞ր կան երկրորդ պատկերին մէջ.—Ի՞նչ կ'ընէ Միհրան, ի՞նչ կ'ընեն սագերը.—Ո՞ւր է գայլը, ի՞նչ կ'ընէ։

---

38. Ա Գ Ռ Ա Ւ Ի Ը

(ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ)

Գիշերն աշնայնի
Երբոր կը հասնի,
Մրթնեն դաշտ ու ծառ,
Սեւ ագռաւն արթուն
Նողկանք տայ մարդուն
Երգելով՝ «Կա՛ռ, կա՛ռ...»։

Ի՜նչ տրգեղ թրռչուն.
Մացառէ մացառ
Սուրայ ոստոստուն
Ու կ'երգէ. «Կա՛ռ, կա՛ռ...»։

39. ՄԱՔՐՈՒՀԻ ԵՒ ԱՆԺԷԼ

— Մայրիկ, կ'ըսէ Մաքրուհի, հացիս քիչ մը անուշեղէն դիր։

— Չկայ աղջիկս, անուշեղէնը հատաւ, վաղը նորէն կը շինեմ։

— Բայց մայր, հաղը առանց անուշեղէնի կ'ուտուի։

— Մայրիկ, կ'ըսէ Անժէլ, Մաքրուհիին քուրիկը, ժապաւէն մը դիր գլխարկիս վրայ։

— Հիմայ չունիմ, աղջիկս, վերջը կ'առնեմ։

— Բայց մայր, գլխարկը առանց ժապաւէնի կը դրուի։

ՈՐԲԸ

Մաքրուհի շատակեր է, Անժել պչրասէր։
Ահա երկուքն ալ նստեր կուլան։ Ինչու։
Որովհետեւ մայրիկը անուշեղէն ու ժապաւէն չտուաւ։

Աղուոր տուն, տաքուկ հագուստ, նոր կօշիկ, պատրաստ հաց, վերջապէս ամէն բան ունին։
Բայց նայեցէք, յիմարներու պէս կուլան, կը կանչեն։
Մաքրուհի անուշեղէնը կ'ուզէ, Անժել ժապաւէնը։

Չեն մտածեր թէ խեղճ որբեր և աղքատ աղջիկներ կան, որոնք ոչ միայն անուշեղէնի և ժապաւէնի, այլ չոր հացի անգամ կարօտը կը քաշեն։
Մինչդեռ Մաքրուհի և Անժել ցուրտէն չեն նեղուիր, ուզած ատեննին կերակուր կը գտնեն և միշտ լաւ կը հագուին, այն դժբախտ որբերն ու աղքատ աղջիկները ձմեռը ցուրտէն կը սառին, ոչ հագուստ ունին, ոչ կօշիկ, ոչ ալ ուտելիք կը գտնեն ամէն օր։

Մաքրուհի և Անժել դպրոց կ'երթան, տան մէջ չեն աշխատիր, միշտ հանգիստ են, զբօսանք կ'ընեն, կը զուարճանան։
Բայց որբուկն ու աղքատիկ աղջիկը մինչեւ

իրիկուն կ'աշխատին, կը չարչարուին, և երբ պարապ ժամ մը ունենան, անտառ կը վազեն՝ կտոր մը ճիւղ ճարելու և անով կրակ վառելու համար։

Իրենց բեռը մեծ բան չէ, բայց իրենք այնքան տկար են որ կը յոգնին ու կը քնանան ճամբուն վրայ։

Եւ իրենց անկողինը գետնի հողն է, ու բարձերնին ալ՝ ճիւղերու խուրձը։

Մաքրուհի և Անժել եթէ այդ աղջիկներէն մէկ հատ մը տեսնեն, սիրտերնին պիտի ցաւի, որովհետեւ երկուքն ալ բարի աղջիկներ են։

Եւ ալ չպիտի լան, Մաքրուհին՝ անուշեղէնի և Անժել՝ ժապաւէնի համար։

Հարցումներ նիւթին վրայ (Դէրքը դոց). — Ինչո՞ւ կուլան Մաքրուհի եւ Անժել —Իրենք ինչ առաւելութիւններ ունին որբ եւ աղքատ աղջիկներուն վրայ.—Ինչպէ՞ս կ'ապրին այս վերջինները.— Ի՞նչպէս պէտք է վարուիլ անոնց հետ, եւ ի՞նչ պէտք է մտածենք զանոնք տեսնելով:

Հարցումներ պատկերին վրայ (Դէրքը բաց).—Ի՞նչ կ'ընեն աղջիկը.—Ո՞ւր կը գտնուի.—Ո՞ր ոտքին կօշիկը եղեր է.—Երկու ձեռքերեն ո՞որը աւելի շատ կ'երեւայ.—Ի՞նչ է իր անկողինը.—Ի՞նչ է իր բարձը:

40. ՃԱՆՃԸ

Մանուշակ և Աւետիս ճանճ մը բռներ են ու կը խաղան հետը։



—Ինչ սիրուն կենդանի է, կ'ըսէ Մանուշակ, որ ճանճին թեւերէն մէկը մատներուն մէջ սեղմած է։

—Հապա գլուխը, կ'ըսէ Աւետիս, քիչ կենդանի կայ որ այսքան աղուոր գլուխ մը ունենայ։



Եւ ինք ալ ճանճին միւս թեւը կ'առնէ մատուրներուն մէջ։

Խեղճ պրոտիկներ որ այդպէս անհոգութեամբ ճանճին հետ կը խաղան։

Չեն գիտեր թէ իրենց այնքան սիրուն երեւցող այդ կենդանիին հետ խաղալով, մեծ վտանգ մը կ'անցընեն։

Ճանճը աղտոտ, շատ աղտոտ, գրեթէ ամէնէն աղտոտ կենդանիներէն մէկն է։

Անիկա միշտ աղտոտութիւններու վրայ կը նստի, և այդ աղտոտութիւններուն մէջէն կը ժողվէ հիւանդութիւններու սերմեր։

Ճանճին գլխուն, թեւերուն, ոտքերուն և ամբողջ մարմնին վրայ միշտ լեցուն են այդ վնասակար սերմերը։

Ասոր համար է որ բնաւ պէտք չէ խաղալ ճանճի հետ։

Երբ ճանճը բռնենք, այդ սերմերը շուտ մը իր մարմնին վրայէն մեր ձեռքերուն վրայ կը փոխադրուին, և այդ սերմերուն հետ ալ հիւանդութիւնները մեզի կ'անցնին։

Դիտեցէք սա պատկերը որ խոշորցուած ճանճ մը ցոյց կուտայ։ Անոր մարմինը, ոտքերը մաղոտ են, և այդ մաղերէն իւրաքանչիւրին ծայրը հարիւրներով, հազարներով հիւանդութեան սերմեր կան։

Դիտեցէք նաև միւս պատկերը որ ճանճի խոշորցուած գլուխ մը ցոյց կուտայ։ Մէջտեղի հաւկթաձեւ մասը աչքն է, շատ մեծ աչք մը որ ամէն կողմէն ալ կը տեսնէ։

Ասոր համար է որ ճանճը շուտով կը հասկընայ թէ իրեն կը մօտենան և կը թռի կը փախչի։

Իր գլուխն ալ մաղերով ծածկուած է, և այդ մաղերուն ծայրը միշտ հիւանդութիւններու սերմեր կան։

Շատ անգամ տղաք հիւանդ կ'ըլլան, ու չեն հասկնար թէ ինչու հիւանդացան։

Անպատճառ ճանճ մը բռնած են և հիւանդութիւնը ճանճէն իրենց անցած է։

Ճանճը մինակ անվնաս հիւանդութիւններ

չի պատճառեր։ Անկէ անցած հիւանդութիւն-ներուն մէջ կան որ կը մեռցնեն։

Հարցուցէք ձեր ուսուցիչին, և անիկա ձեզի պիտի ըսէ թէ ի՞նչ տեսակ հիւանդութիւններ են ատոնք։

Հարցուցէք նաև թէ հիւանդութիւնները ինչ-պէ՞ս ճանճէն ձեզի կ'անցնին։

Եւ ան ատեն պիտի հասկնաք որ շատ վը-տանգաւոր բան մըն է ճանճի հետ խաղալը։

Հարցումներ Նիւբին վրայ (Գիրքը գոց).—Ի՞նչ կ'բնիին Մանուշակ եւ Աւետիս.—Ինչո՞ւ պիտի չի խաղայ ճանճերու հետ. — Ճանճի նմանող ուրիշ ի՞նչ տեսակ կենդանիներ գիտէ. – Ճանճը ինչո՞ւ շուտ մը կը տեսնէ մեզ, երբ իրեն կը մօտենանք.—Տարուան ո՞ր եղանակին սիչ ճանճերը կը շատնան:

Հարցումներ պատկերներուն վրայ (Գիրքը բաց).— **Ա. Պատկեր.** Ճանճին ո՞ր կողմը կ'երեւայ.—Քանի՞ ոտ ունի. – Ո՞րն է գլուխը. — Որո՞նք են թեւերը.—Ո՞րն է փորը.—Ո՞ր մասերը մազոտ են.—Իւրաքանչիւրը ո՞ւր է: **Բ. Պատկեր.**—Ո՞րն է ճանճին աչքը.—Ի՞նչ ձեւ ունի.—Ինչո՞ւ կը գտնուին շուրջը։

41. ՍՈԽԱԿԸ

(ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ)

Արշալոյսն ոսկի
Երբոր կը ծագի,
Կ'երփնէ դաշտ ու ծառ,
Ժիր սոխակն արթուն՝
Հեշտանք տայ մարդուն
Երգերով պայծառ։

Կայտառ ու սիրուն,
Կ'ոստոստէ թրթռուն
Մացառէ մացառ,
Իր զբաղարթագին
Ցոյց կու տայ հոգին
Երգերով պայծառ։

42. ԸՄԲԻՇ ՏՂԱՔ

(ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԱՌԱՆՑ ՆԻՒԹԻ)



Հարցումներ. — *Ի՞նչ կը տեսնիք պատկերին մէջ. — Քանի՞ տղայ կան. — Ի՞նչ կ'ընեն առաջին կարգին վրայ գտնուող երկու տղաները. — Ըմբիշ դրդռա համար ի՞նչ ունենալ պէտք է. — Տղոցմէն քա՞նի՞ ուրիշ ինչե՞ր կը նշմարէք պատկերին մէջ։*

43. ՍԿԻԻՌՆԵՐԸ

— Տղաքս, ըսաւ մայրը սկիւռը, ահա ձեզի աղուոր կաղինները, կերէք, և աղմուկ մի հանէք, որովհետեւ կուզը կը լսէ և կու գայ ձեզ կը խեղդէ։

— Կուզը ի՞նչ է, մայր, հարցուցին փոքրիկ սկիւռները։

— Կուզը աղուէսին նմանող կենդանի մըն է, անոր պէս աղուոր երկար պոչ մը ունի, և աղուէսէն աւելի վտանգաւոր է։

— Ինչո՞ւ համար, մայր, կուզը աղուէսէն աւելի վտանգաւոր է։

— Որովհետև կրնայ ծառերէն վեր մագլցիլ մեզի պէս, և գայ ձեզ խեղդել։

Այս ըսելով՝ մայրը սկիւռը ելաւ գնայ։

Փոքրիկ սկիւռները իրենց մօրը խրատը մտիկ չըրին։ Հազիւ մայրերնին հեռացած էր, սկսան կռուիլ իրարու հետ, սուր սուր ճչելով։

Զար կուզն ալ այդ միջոցին անօթի՝ կը մտածէր թէ ո՞ր կողմէն պիտի ելլէ ուտելիքը, երբ յանկարծ ձայն մը առաւ։ Պզտիկ սկիւռներուն կրռուին ձայնն էր որ իրեն կու գար։

— Եթէ չեմ սխալիր՝ սկիւռի ձայն է ասիկա, ըսաւ կուզը, մտիկ ընենք նայինք։

Փոքրիկ սկիւռները կը շարունակէին կռուիլ ու ճչել։

— Այո՛, այո՛, սկիւռներ են, ըսաւ կուզը ու-

բախութեամբ, բայց որ սատանի ծակէն կուգայ իրենց ձայնը. անպիտանները քիթիս տակ բոյն շիներ են և ես չեմ գիտեր։

Կուզը մէկ քանի վայրկեան ուշադրութեամբ մտիկ ըրաւ, հասկցաւ թէ ուրկէ կուգայ սկիւռներուն ձայնը, և կամացուկ մը սկսաւ ծառէն վեր ելլել։

Փոքրիկ սկիւռները միշտ կը կռուէին։

— Մայրիկին գացած ատենը երեք ընկոյզ կար, կ'ըսէր մէկը, հատ մը դուն կերար, հատ մըն ալ ես, մնացածն ալ իմս է, քանի որ ես քեզմէ մեծ եմ։

— Ո՛չ, կ'ըսէր միւսը, ես քեզմէ պզտիկ եմ, պէտք է ուտեմ որ մեծնամ, իմս է այդ ընկոյզը։

Միւս սկիւռը պատասխան չէր տուած դեռ, երբ հեգնոտ ձայն մը լսուեցաւ։

— Այո՛, կ'ըսէր այդ ձայնը, պզտիկը իրաւունք ունի, պէտք է ուտէ տակաւին որ մեծնայ և աւելի համեղ ուտելիք մը դառնայ ինծի համար. իսկ դուն՝ բաւական համեղցած ես, կ'արժէ որ քու արիւնդ խմեմ։

Կուզն էր, որ շուտ մը ըսածին պէս ըրաւ. սկիւռներէն ամէնէն մեծը խածաւ տարաւ։

Միւս սկիւռը՝ վախէն մնացեր էր գտնուած տեղը։ Երբոր կուզը գնաց, շուտ մը իջաւ ծա-

ուէն վար, վազեց, վազեց, մինչեւ որ մայրը գտաւ և անոր պատմեց եղածը։

Խեղճ մայրիկը հասկցաւ որ տղաքը իր խօսքը մտիկ չէին ըրեր, բայց ալ ի՞նչ կրնար ընել, նստաւ ու լացաւ իր զաւկին վրայ։



Ալ իրենց բոյնը չէին կրնար երթալ, որովհետեւ կուզը հասկըցեր էր անոր տեղը, և միշտ պիտի գար։

Խեղճերը երկար ատեն թափառեցան, մինչեւ որ ապահով ծառ մը գտան և այնտեղ նոր բոյն շինեցին։

— Ա՜խ, կ'ըսէր մայր սկիւռը, եթէ իմ խօսքըս մտիկ ըրած ըլլայիք, այս փորձանքները չպիտի գային մեր գլխուն։

Հարցումներ նիւթին վրայ (Գիրքը գոց).—Ի՞նչ տեսակ կենդանի է սկիւռը —Ո՞ր կենդանիին կը նմանի.—Հապա կո՞ւզը.—Ի՞նչ տարբերութիւն կայ կուզին եւ աղուէսին միջեւ.—Ի՞նչպէս եղաւ որ կուզը խեղդեց սկիւռներուն մէկը։

Հարցումներ պատկերներուն վրայ (Գիրքը բաց) —Ո՞ր պատկերներուն մէջ կը գտնուի կուզը։—Մարմնին ո՞ր մասը աւելի մեծ է. — Գ. պատկերին մէջ կուզին թեւերը ի՞նչ կայ.—Եթէ այդ խեղդուած կենդանին հաւ մը ըլլար՝ խեղդողը ի՞նչ տեսակ կենդանի պիտի ըլլար.—Իսկ եթէ մո՞ւկ մը ըլլար խեղդուածը։

---

44. ԼՈՒՍԻՆԸ

Լուսինը մեր գիշերուան լապտերն է, ինչպէս արեւը՝ մեր ցերեկուան լապտերը։

Բայց արեւին և լուսինին մէջ մեծ տարբերութիւն կայ։

Ամառ ըլլայ թէ ձմեռ, անպատճառ արեւը մեզ կը լուսաւորէ ցերեկները։ Եթէ ամպերու տակ ծածկուած ըլլայ ու չտեսնենք զայն, նորէն իր լոյսը կը հասնի մեզի։

Իսկ լուսինը միշտ չի լուսաւորեր մեզ։ Շատ անգամ կը տեսնենք զայն, բայց իր լոյսը մեզի չի հասնիր։

Ահա Արամ պառկեր է, և պատուհանէն կը տեսնէ լուսինը՝ որ եղի մը եղջիւրներուն ձեւը ունի։

Երբ լուսինը այդ ձեւը կ'առնէ, մահիկ կամ կիսալուսին կ'ըսենք անոր։

Այդ ձեւով, աղուոր զարդ մըն է երկինքին վրայ, աստղերուն մէջ, սակայն մեզի օգուտ չունի, որովհետեւ լոյս չի տար։

Բայց ժամանակ մը եւոքը կը կլորնայ, ամ-

բողջութեամբ կ'երեւայ՝ պզտիկ տղու մը դէմքին պէս։

Այն ատեն մեզի լոյս կուտայ գիշերները, այնքան պայծառ լոյս մը, որ առանց ճրագի պէտք ունենալու, կրնանք կարդալ ու գրել։

Երբ լուսինը այդպէս ամբողջ է, լիալուսին կը կոչուի։

Լուսինը աշխարհ մըն է մեր երկրին պէս, թէեւ բնակիչ չունի։

Երբոր ամբողջ ըլլայ և ուշադրութեամբ նայիք, անանկ կը կարծէք թէ խոշոր ճերմակ դէմք մըն է։ Ձեզի անանկ պիտի երեւայ թէ աչքեր, քիթ մը ու բերան մը կը գտնուին անոր վրայ։

Ատոնք սակայն լուսինին լեռներն են, որոնք հեռուէն դէմքի մը մասերուն կը նմանին։

Լուսինը ունի նաև ծովեր, գետեր, ճիշդ ինչպէս կը գտնուին մեր երկրին վրայ։

Հարցումներ նիւթին վրայ (Գիրքը գոց).—Լուսինին եւ արեւին մէջ ի՞նչ տարբերութիւն կայ.—Ո՞րն է մահիկը, ո՞րն է լիալուսինը.—Մահիկը ուրիշ ի՞նչ անուն ունի —Ինչո՞ւ կը գտնուին լուսինին վրայ. — Լուսինը ե՞րբ լոյս կուտայ:

Հարցումներ պատկերներուն վրայ (Գիրքը բաց).—Ո՞ր պատկերին վրայ կը գտնուի մահիկը.—Ո՞ր պատկերին վրայ կը գտնուի լիալուսինը.—Ինչ՞ն կը զանազանիք զանոնք.—Ուրիշ ինչո՞ւ կը տեսնիք այդ պատկերներուն մէջ:

---

45. ՀԱՍՏԼԿԻՆ ԳԼԽՈՒՆ ԵԿԱԾԸ

1. — Հաստլիկ արջը իր որջէն ելեր՝ գիւղին պարտէզներուն մօտ կը պտտէր, երբ հեռուէն տեսաւ Յովնան եղբօր մեղրի փեթակները, որոնք քով քովի շարուած էին։

Հաստլիկը պզտիկ տղոցմէն աւելի կը սիրէ մեղրը։ Եղբոր փեթակներուն մօտ եկաւ, բերանին ջուրերը կը վազէին։

— Շիտակը սա մեր Յովնան եղբայրը լաւ մեղր կը հասցնէ, ըսաւ, գէշ չըլլար եթէ համը նայինք։

2. — Հաստլիկը վերցուց իր ահագին թաթը, փեթակներէն մէկը գլորեց գետին, գլուխն ալ մէջը խոթեց և սկսաւ մեղրը լափել։

Տը՛զզ, տը՛զզ, վժացին մեղուները իր շուրջը, ցրուեցան փախան, մինչդեռ Հաստլիկը կը շարունակէր գլուխը փեթակին մէջ խոթել։

Բայց մեղուներուն վախը շուտով անցաւ։

Խումբ խումբ եկան Հաստլիկին վրայ յարձակեցան, և սկսան աղուոր մը խայթել զայն։

3. — Հաստլիկը նախ կարեւորութիւն չը տուաւ, բայց մեղուները այնքան ուժով կը խայթէին որ սկսաւ պոռալ ցաւէն։

— Հիմայ ես ձեր պատիժը կուտամ, ըսաւ ոտքի ելլելով։

Բայց մեղրը փակչող է։ Փեթակը՝ գլխարկի մը պէս Հաստլիկին գլխուն կպած էր, և խեղճ արջուկը շատ դժուարութիւն կը քաշէր զայն հանելու համար։

Իսկ մեղուները կը շարունակէին խայթել, ուժով, այնքան ուժով որ արջուկը ցաւէն կը պոռար։

4. — Վերջապէս Հաստլիկը յաջողեցաւ գըլուխը փեթակէն ազատել։ Բայց այս անգամ ալ ուրիշ փորձանք։

Մեղրը լաւ մը գլխուն փակած էր, դէմքը չէր տեսնուեր, ինք ալ շուրջը չէր տեսներ։

Զինքը տեսնող մը չպիտի հաւատար որ Հաստլիկն է. այնքան փոխուած էր դէմքը։ Մեղուները միշտ կը խայթէին, անխնայ կը խայթէին։ Արջուկը սկսաւ փախչիլ։

5. — Վազեց, վազեց, մինչեւ որ հասաւ առուակի մը մօտ։



Արջուկին ցաւերը

—Փառք Աստուծոյ, փրկուեցանք, ըսաւ, և ճլմպ... ջուրին մէջ ցատկեց գլխիվայր։

Մեղուները ձգեցին խեղճին օձիգը, թռան գացին իրենց աւերած փեթակը կարգի դնելու։

6. Հաստլիկը երկար ատեն լուացուեցաւ ջուրին մէջ ու շատ չարչարուելէ ետք, վերջապէս յաջողեցաւ մաքրել գլխուն փակած մեղրը։

Երբոր լաւ մը զովացաւ, գլուխը դուրս հանեց ջուրէն, տեսաւ որ մեղուները գացեր են, ու երդում ըրաւ որ ալ ուրիշ անգամ փեթակի չպիտի մօտենայ։

Ուսուցիչներուն —Այս դասին մաս կը կազմէ նաեւ յաջորդ էջին առանց նիւթի վարժութիւնը։

46. ՀԱՍՏԼԻԿԻՆ ԳԼԽՈՒՆ ԵԿԱԾԸ

(ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԱՌԱՆՑ ՆԻՒԹԻ)

Հրահանգ.—Նախորդ պատմութեան հետեւելով, ցոյց տուէք թէ այս վեց պատկերներուն իւրաքանչիւրը անոր ո՞ր հատուածին կը պատշաճի:

Օրինակ.—Ամենեն վերի կարգին վրայ գտնուող ձախ կողմի պատկերը կը պատշաճի նախորդ պատմութեան 2 թիւը կրող հատուածին:

47. ՍԱՏԱՆՈՐԴԻ ԱՂՈՒԷՍԸ

(ԵՐՐՈՐԴ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)

Հաստլիկ արջուկը ջուրէն ելաւ գովացած, բայց նորէն չէր հանգստացած։ Մեղուները աղէկ խայթեր էին, և մարմինը կը ցաւէր։

—Երթանք մեր աղուէս եղբօր, ըսաւ, անպիտանը լաւ բժիշկ է, ճար մը կը գտնէ։

Ու վաղելով հասաւ աղուէսին տունը։

Իր բախտէն՝ սատանորդին տունն էր։

—Բարեւդ անուշ, խնամի Հաստլիկ, ըսաւ պատուհանէն, աս ի՞նչ հով փչեց որ մինչեւ հոս եկար։

Այն ատեն Հաստլիկ պատմեց գլխուն եկած փորձանքը։ Քանի կը պատմէր, աղուէսը այնքան կը խնդար։ Երբոր արջը վերջացուց,

—Տնաշէն, ըսաւ, եթէ մեղր ուտել կ'ուզէիր, ինչո՞ւ ինծի չեկար. այստեղ մօտը առատ և պատուական մեղր կար, ինծի գայիր, և ուզածիդ չափ պիտի կրնայիր ուտել։

—Չէ, երդում ըրի, ալ բնաւ մեղուներուն չպիտի մօտենամ, ըսաւ Հաստլիկը, կը բաւէ ինչ որ քաշեցի անիծածներուն ձեռքէն։

—Բայց եթէ քեզի ըսեմ որ իմ ունեցած մեղրիս քով բնաւ, բնաւ մեղու չկայ։

—Բնաւ մեղու չկայ...

Հաստլիկը շուտ մը մոռցաւ իր ցաւերը, և



սկսաւ լեզուն բերնին շուրջը պտտցնել։

—Նկուր որ տեսնես, ըսաւ աղուէսը, և վար իջնելով, արջուկին հետ ճամբայ ելաւ։

Քալեցին, քալեցին, հասան փայտահատի մը պարտէզը։ Աղուէսը արջը ներս մտցուց ու տարաւ ծառի խոշոր կոճղի մը քով, որուն մէջտեղը փայտահատը երկար ճեղք մը բացած էր և ճեղքին մէջ ալ տապար մը ձգած էր, որպէս զի չգոցուի։

—Ահա այս ճեղքին մէջն է մեղրը, ըսաւ աղուէսը. նայէ շուրջդ, բնաւ մեղու չկայ. իսկ մեղրը ամէնէն պատուական տեսակէն է։

—Բայց ինչպէս ուտելու է, աղուէս եղբայր, բան մը չի տեսնուիր։

—Շատ դիւրին է, Հաստլիկ խնամի. գլուխդ

խոթէ սա ճեղքին մէջ, և ցուցկդ մխէ խորը. շուտով լեզուդ մեղրին պիտի հասնի։

Հաստլիկը գլուխը խոթեց ճեղքին մէջ, և սկսաւ լեզուն չորս դին պտտցնել։ Մեղրին հոտը անգամ չկար։

—Բան չկայ, աղուէս եղբայր, ըսաւ, ուր է մեղրը։

—Քիչ մրն ալ, քիչ մրն ալ, ու պիտի գտնես։

Տխմար Հաստլիկը, ուժը տուաւ գլխուն, և այնքան աշխատեցաւ որ կոճղին ճեղքը քիչ մը աւելի բացուեցաւ։

Այն ատեն, աղուէսը շուտ մը քաշեց հանեց տապարը, ճեղքն է սեղմուեցաւ և Հաստլի-



կին գլուխը բանտարկուած մնաց կոճղին մէջ։

—Վա՜յ գլուխս, մեռայ, կը պոռար խեղճը, ցաւէն ոռնալով։

Գլուխը այնքան ուժով բռնուած էր կոճղին

մէջ որ չէր կրնար դուրս քաշել. ու քանի կը փորձէր հանել, այնքան սաստիկ կը ցաւէր։

Իսկ անպիտան աղուէսը կը հեգնէր.

—Բարի ախորժակ, Հաստլիկ խնամի, գլուխդ մեծցնելուդ՝ խելքդ մեծցուր որ ուրիշ անգամ չհաւատաս թէ կոճղի մը մէջ մեղր կը գտնուի. ահա փայտահատն ալ գալու վրայ է, քիչ մը մեղր ալ անպիտի կերցնէ քեզի։



Իրաւ ալ փայտահատը լսած էր արջուն աղաղակները և կը վազէր կուգար։ Երբոր կոճղին քով հասաւ և եղածը տեսաւ, շուտ մը փայտ մը առնելով փառաւոր տփոց մը ալ ինք քաշեց Հաստլիկին։

Խեղճը մինչեւ որ յաջողեցաւ գլուխը կոճղէն դուրս հանել, հոգին բերանը եկաւ։

Հարցումներ Ցիւրին վրայ (Գիրքը դոց).—Ի՞նչ է փայտահատը.—Ի՞նչ է տապարը.—Ինչի՞ կը ցործածուի.—Կոճղը ծառին ո՞ր մասն է.—Ինչո՞ւ տապարը ճեղքին մէջ ձգուած էր.—Արջուն գլուխը ինչո՞ւ բռնուեցաւ։

48. ԱԳԱՐԱԿԸ

(ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ)

Արշալոյսին, ամէն օր,
Աքլորն, իր ձայնով հրզօր,
Իր հաւնոցին մէջ ազատ
Կ'երգէ, կ'երգէ անընդհատ։

Մնչող տատրակին քովիկ
Հաւը կ'ընէ վագ, վագ, վիկ,
Ու ճուտերն որ նոր ելան
Կը ճրւան, կը ճրւճրւան։

Կատուներն, իրենց կարգին,
Մլաւ, մլաւ կ'ընեն անձկագին։
Երբ խոզերը կը խանչեն,
Շուներն անդին կը հաչեն։

Գառնուկն իր ձայնով նիհար
Կը մայէ, կը մայէ յար.

Մինչդեռ բադը ծանրաշարժ
Քուա՛, քուա՛ կը պոռայ անվարժ։

Զորս անկիւնէն ախոռին
Համերգ մ'է հեշտ ու խորին.
Կը բառաչէ կովն. իսկ ձին
Կը վրրընչէ առանձին։

Եւ չը մնայով միւսներէն՝
Կը զռայ էշն ալ դաշնօրէն,
Եւ իր ձայնէն հաստ ու խոր
Կ'արթննան լեռ, դաշտ ու ձոր։

---

49. ԺՊՏՈՒՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

(ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԱՌԱՆՑ ՆԻՒԹԻ)



Հարցումներ. — Քանի՞ կենդանի կը գտնուին պատկերին մէջ. — Ի՞նչ կը կոչուին. — Ի՞նչ գիտէք անոնց մասին. — Իւրաքանչիւրին մարմնին ո՞ր մասերը կ'երեւան. — Ո՞ր մասերը չեն երեւար։

---

50. ՄԻՀՐԱՆ ՆՈՐԷՆ ԿԸ ԳԾԷ

Միհրան հիմայ բաւական յաջող գծագրիչ մը եղած է։ Լաւ բնաւորութիւն մը ունի, որ իր յաջողութեան գլխաւոր պատճառն է. երբ գործի մը սկսի, կը յարատեւէ, և միշտ կը ջանայ որ լաւ ընէ այդ գործը։ Ալ ամէն մարդ կ'ըսէ թէ Միհրան օր մը մեծ նկարիչ մը պիտի ըլլայ։

Նայեցէք, ձեզմէ շատերուն անծանօթ կենդանի մը է գծեր. այդ կենդանին եղջերուի ձագ մըն է, եղնիկ մը. եթէ ուշադրութեամբ նայիք՝ պիտի տեսնէք որ եղնիկը գծելու համար Միհրան միայն ուղիղ գիծեր քաշեր է։

Ահա հիմայ ալ ձեզի շատ ծանօթ կենդանի մը գծեց, այս անգամ միայն կոր գիծերով։ Մատիտը ձեռքերնիդ առէք, և անոր գծածին հետեւելով ցոյց տուէք թէ պզտիկ կլոր շրջանակը զոր ամէնէն առաջ շինած էր, ինչպէ՞ս կատու մը եղաւ։



Սա կինն ալ որ կեցեր է պատկերին ծայրը, Միհրանի գծածն է։ Բայց այս անգամ թէ՛ կոր և թէ ուղիղ գիծեր գործածելու պէտք ունեցեր է։ Ցոյց տուէք թէ որո՞նք են քաշած ուղիղ գիծերը և որո՞նք են կոր գիծերը։ Ըսէք նաև թէ կոր գիծերով պատկերին ո՞ր մասերը շիներ է. հապա ուղի՞ղ գիծերով։



Միհրանի գծած պատկերներէն մէկն ալ թիթեռնիկ մըն է։ Եթէ լաւ մը դիտէք, պիտի տեսնէք որ հինգ տարբեր ձեւեր շիներ է՝ թիթեռնիկը գծելու համար։ Ցոյց տուէք թէ ի՞նչ կարգով գծեց այդ ձեւերը, այսինքն՝ ամէնէն առաջ ո՞ր ձեւը գծեց, յետոյ ո՞ր ձեւը, յետոյ...

Սեւ շուքն ալ զոր կը տեսնէք սա վերջին պատկերին ծայրը, նոյնպէս Միհրանի գծածն է։ Բայց այս անգամ՝ եօթը տարբեր ձեւեր շիներ

է՝ շուքը գծելու համար։ Ի՞նչ կարգով գծեց այդ ձեւերը։

Միհրանին պէս եթէ դուք ալ աշխատիք, պիտի տեսնէք որ շատ դժուար չէ լաւ գծագրիչ մը ըլլալը։

Մի՛ մոռնաք սակայն որ երեք բան պէտք է ատոր համար. — ուշադրութիւն, համբերութիւն և յարատեւութիւն։

---

51. ԱՇՈՒՆԸ ԴԱՇՏԵՐՈՒՆ ՄԷՋ

(ԱՐՏԱՍՍԱՆՈՒԹԻՒՆ)

Ցուրտ ու ձմեռ չսկսած դեռ
Հողը կ'առնէ ամէն հունտեր.
Ակօսներուն մէջը հարուստ
Սերմանացանը կը ցանէ հունտ։

Սերմը կ'աճի հոն անդադար,
Գիշեր ցերեկ կը գործէ յար,
Ու պատռելով հողը յանկարծ
Ան կը ծըլի կամաց կամաց։

---

52. ՋՈՒՐԻ ԿԱԹԻԼԻ ՄԸ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Տղաք, չէք գիտեր թէ ինչեր անցան Ջուրի կաթիլի մը գլխէն։ Պատմեմ ու մտիկ ըրէք։

Ջուրի կաթիլը գետին հետ մէկտեղ քշուելով ծով գնաց և հանգիստ կը պտտէր, բայց յանկարծ ձուկ մը կլլեց զայն։

Ձկնորսներ բռնեցին ձուկը, և ծովէն հանելնուն պէս, ստկեցին ու տապակին մէջ դնելով սկսան տապակել։ Ջուրի կաթիլը տաքէն շոգի դարձաւ և թռաւ օդին մէջ։

Թռաւ ու թռաւ, թռչունի մը պէս փախաւ հովերուն առջեւէն, բարձրացաւ այնքան վեր որ ամպերուն խառնուեցաւ։

— Էհ, ըսաւ, ալ այստեղ հանգիստ կ'ընեմ։

Բայց յանկարծ սաստիկ ցուրտ եկաւ, Ջուրի կաթիլը սառեցաւ, կարկուտ դարձաւ, ու վար իյնալով որթատունկի տերեւի մը վրան մնաց։

— Վերը հանգիստ չգտանք, թերեւս վարը հանգիստ մնանք, մտածեց, և աղուոր մը տեղաւորուելու վրայ էր, երբ արեւը զայն հալեցուց։

Ջուրի կաթիլը տերեւին վրայէն ինկաւ հողին վրայ, ուր որթատունկին արմատը ծծեց զինքը։ Կաթիլը՝ որթատունկին ցողունին բարակ ճամբաներէն անցնելով, գնաց մտաւ խաղողի հատիկի մը մէջ։

— Ալ այստեղ ինձի մարդ չի դպչիր, ըսաւ, չորս կողմս գոց է, երեսս անգամ չեն տեսներ։

Բայց հազիւ թէ խօսքը վերջացուցած էր, երբ չարաճճի մանուկ մը խաղողին ողկոյզը փրցնելով կերաւ, կաթիլն ալ հետը։

Հարցումներ Ցիւրին վրայ (Գիրքը գոց).— Ինչպէ՞ս ջուրի կաթիլը շոգի եղաւ, ինչպէ՞ս կարկուտ դարձաւ.— Ի՞նչ է որթատունկը, բո՞ւսի է թէ ծառ.— Ի՞նչ է արմատը, ի՞նչ է ողկոյզը, ի՞նչ է ցողունը:

Հարցումներ պատկերին վրայ (Գիրքը բաց).— Ի՞նչ կը կոչուի այդ ձեւով վազող ջուրը.— Ո՞ւր է ճամբան.— Ճամբուն եզերքը ի՞նչ խաչուած է.— Ո՞ւր է ջուրը.— Ո՞ւր են ժայռերը. — Ո՞ւր են բուսիները:

53. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

(ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ)

Տըղան ըսաւ. — «Ա՜յ թռչնիկ,
Տես, ոսկեթել բովանդակ
Քեզ պատրաստեր եմ վանդակ,
Բընակարան երջանիկ։

«Զորուկ կորեակ, թարմ բզրուկ,
Մամուռ մահիճ ծաղկազարդ,
Ամէն բան կան։ Հոն զբաւարթ
Կեանք կը վարես անտաղտուկ»։

Թռչնիկն ըսաւ.—«Պատանի՛,
Ամէնէն ճոխ վանդակին
Հետ չեմ փոխեր ես կրկին
Ծառն անտառին ընտանի.

Բնաւ բան չեմ բաղձար ես շատ։
Քու պալատիդ մէջ փարթամ
Ես բանտարկուած պիտ՝ ըլլամ։
—Կեանքը՝ ապրիլն է ազատ»։

54. ՏՂԱՔԸ ԵՒ ԹՌՉՈՒՆԸ

(ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԱՌԱՆՑ ՆԻՒԹԻ)



Հարցումներ.—Տղան ի՞նչ կուտան թռչունին.—Ի՞նչ առարկաներ կը տեսնէ սենեակին մէջ.—Թռչունը ո՞ւրկէ դուրս եկած է.—Ի՞նչ կայ պատուհանին մէջ, ինչի՞ մէջ դրուած է, ի՞նչ կը պարունակէ:

55. ՓԻՂԸ

Քօթօթն ու Բրդոտը կը ճանչնաք արդէն։ Քօթօթ մեր շունն է, Բրդոտ մեր կատուն։ Գիտէք որ երկուքն ալ իրարու հետ խռով կ'ապրէին միշտ։ Բայց իրենց ձագերը իրարու հետ սիրով մնացին. ամէն ատեն մէկտեղ կը պտտէին ու կը խաղային։

Այն ատենները՝ փիղ մը կար մեր մօտը։ Մարդ մը առեր քաղաք բերեր էր, և դրամով կը ցուցնէր ուզողին։

Պզտիկ Քօթօթն ու պզտիկ Բրդոտը, առտու մը պտտելու ելած էին, երբ յանկարծ փիղը իրենց դէմը ելաւ։

— Ի՞նչ կ'ըսես Բրդոտ քուրիկ, ըսաւ պզտիկ Քօթօթը, եկուր սա փիղին հետը իյնանք։

— Խենթ մի ըլար, ըսաւ պզտիկ Բրդոտը, խոշոր կենդանի է, մեզ կը ծեծէ։

— Չէ, Բրդոտ քուրիկ, բան չըներ. երէկ իրիկուն տունը անոր խօսքը կ'ընէին. կ'ըսէին թէ շատ բարի կենդանի մըն է, մարդու չի դրպ-



Գրասենեակի ժամը

չէր, և աղուոր կը ծառայէ մարդոց. իր երկար քիթը որ կնճիթ կը կոչուի, շատ ծանր բաներ կրնայ վերցնել։ Ուրիշ փիղեր՝ այդ կնճիթին երկու քովէն դուրս ցրցուած ակռաներ կ'ունենան, որոնց փղոսկր կ'ըսեն, և որոնք շատ յարգի են. սուղ առարկաներ կը շինուին անոնցմով։ Երկուր հետը իյնանք, քիչ մը գուարճանանք. եկուր, մի՛ վախնար, բան չըներ։



Յետոյ՝ մենք անկէ արագ կը վազենք, շուտ մը կը փախչինք։



Անմիտ Բրդոտը համոզուեցաւ, և երկուքը մէկ յանկարծ վազեցին փիղին վրայ։ Բրդոտ աղուոր ճանկ մը զարկաւ անոր կնճիթին, Քօթօթ ալ ականջներէն մէկը խածաւ։

Փիղը նախ կարեւորութիւն չտուաւ, բայց երբ անոնք կրկնեցին, ոտքի ելաւ, ու կնճիթովը Քօթօթը կռնակէն բռնելով, վեր՝ օդին մէջ բար-

ձրացուց։ Խեղճին գլուխը սկսաւ դառնալ. երբեք այդքան բարձրը չէր եկած։ Բրդոտ ալ ապշած կը նայէր, երբ փիղը իր ծանր ոտքերէն մէ-



կուն տակ սեղմեց անոր պոչը, և այնչափ ցաւցուց, այնչափ ցաւցուց որ քիչ մնաց անպիտանին հոգին ելլէր։

Անկէ ետքը, մեր Քօթօթը, ամէն անգամ որ փիղը տեսնէր, կը հաչէր, բայց հեռուէն, վախնալով որ նորէն փորձանք կու գայ գլխուն։

Փիղը բաւական ատեն համբերեց, բայց օր մը, համբերութիւնը հատնելով,

— Կեցիր, ըսաւ, քեզի խաղ մը խաղամ որ խելքդ գլուխդ գայ, և ալ բնաւ չհաչես։

Առտու մը, մինչդեռ Քօթօթ արեւին տակ փռուեր կը քնանար, փիղը վազեց գնաց իր ջուրի դոյլին քով, և կնճիթը աղուոր մը լեցուց ջուրով։

Յետոյ, կամացուկ մը Քօթօթին մօտենալով, կնճիթովը բռնեց կռնակէն, և սկսաւ պըտըտցնել փողոցներուն մէջ, որպէս զի ամէն մարդ տեսնէ։

Քօթօթին պոռչտուքներէն, տղաքը դուրս ինկան տուներէն, և իրենք ալ պոռալով կանչելով կը հետեւէին փիղին։ Քօթօթին վիճակը աղէկ չէր. կ'երեւայ թէ շատ ցաւ կը զգար, բայց տղաքը կը զուարճանային։

Շատ աւելի պիտի զուարճանային քիչ մը ետքը, որովհետեւ փիղը իրաւ աղուոր խաղ մը պատրաստած էր Քօթօթին։

Երբոր մեր տան առջեւ հասաւ, նստաւ գետինը, բարձրացուց կնճիթը, ուրկէ ջուրը սկըսաւ դուրս խուժել սիւնի մը պէս, իրեն հետ վեր հանելով մեր Քօթօթը։

Խեղճ Քօթօթ. ջուրէն կը սոսկար միշտ, բայց հիմայ անկէ չէր որ կը վախնար։ Փիղը մէյ մը վեր կը հանէր, մէյ մը վար կ'իջեցնէր գինքը։ Քօթօթ վախէն մեռնելու վրայ էր, իսկ փիղը կը մարէր խնդալէն։

Տղաքն ալ, որոնք այս խաղին չէին սպասեր, ելեր էին պատին վրայ և կը խնդային կուշտ ու կուռ։

Տեսնելիք բան էր Քօթօթին փախուստը, երբ վերջապէս ազատեցաւ փիղին ձեռքէն։

Անկէ ի վեր՝ ալ չի հաչեր փիղին ետեւէն։

Հարցումներ նիւթին վրայ (Դիրքը գոց). — Ի՞նչ տեսակ կենդանի է փիղը.— Ի՞նչ ծառայութիւններ կը մատուցանէ մեզի.—Ի՞նչ տեսակ բնաւորութիւն ունի. — Ի՞նչ ըրին Քօթօթն ու Բդոցը. — Փիղը ինչպէ՞ս պատժեց զանոնք:

Հարցումներ պատկերներուն վրայ (Դիրքը բաց). — Պատկերները հետեւեալով կրկնեցէք պատմութիւնը.—Ըսէք թէ ինչո՞ւ կը տեսնէք յորտորդ պատկերին մէջ:

---

56. ԱՌԻԾԸ

Առիւծը կենդանիներուն ամէնէն ուժեղը չէ, բայց ընդհանրապէս կ'ըսեն թէ կենդանիներուն թագաւորն է։

Գիտէ՞ք ինչու։ Որովհետև շատ ազնուական

ծերեւոյթ ունի, ճիշտ թագաւորի մը կը նմանի։

Առիւծը ընտանի կենդանի մը չէ, այսինքն մարդոց հետ ընտանեցած չէ, անոնց հետ չապրիր։ Առիւծը վայրի կենդանի մըն է, գազան

մըն է։ Երբ մարդ տեսնէ, վրան կը յարձակի, կը բզքտէ ու կ'ուտէ։

Իր եղունգները, որոնք ճիրան կը կոչուին, շատ զօրաւոր են. անոնցմով կը կռուի և իր հակառակորդներուն միսը կը բզքտէ։ Ակռաներն ալ շատ զօրաւոր են։ Արու առիւծը վիզին շուրջը առատ բաշ ունի, և երկար պոչին ծայրն ալ մազէ ծոպ մը կայ։ Էգը բաշ չունենար։

Երբ առիւծը պզտիկ է, չի վնասեր մարդու։ Դիտեցէք սա պատկերը, ուր սակառի մը մէջ առիւծի երեք ձագեր ու տղայ մը կը տեսնուին։ Պզտիկ առիւծները չեն դպչիր տղուն. բայց եթէ քիչ մըն ալ մեծնան, կը խածնեն զայն։ Եւ եթէ բոլորովին մեծցած ըլլան, կը բզքտեն ու կ'ուտեն։

Այս վայրի կենդանին շատ ընտանեսէր է, իր ձագերը լաւ կը պահէ, բարի ծնողքի մը պէս։

Կան մարդիկ որոնք կը յաջողին դսպել առիւծը և ուրիշ վայրի կենդանիներ, ու գառագեղներու մէջ դնելով մեզի ցոյց կու տան դրամով։ Այդ տեսակ մարդոց գաղանազուսպ կ'ըսեն։

Եթէ առիւծը ոյժ ունի, մարդիկ ալ խելք ունին։ Եւ շատ անգամ մարդոց խելքը կը յաղթէ առիւծին ոյժին։ Մարդիկ չեն կրնար կռուիլ անոր հետ, բայց զէնքեր շինած են և հեռուէն կը սպաննեն զայն։ Մինչև անգամ թակարդներ լարելով ողջ ողջ կը բռնեն առիւծը։

Մի կարծէք թէ ուժեղ առիւծը իրմէ պզտիկներուն պէտք չունենար։

Անգամ մը՝ առիւծ մը նստեր էր, երբ յանկարծ մուկ մը ինկաւ թաթին տակ։

Խեղճ կենդանին հասկցաւ որ առիւծը զինքը պիտի ուտէ, և սկսաւ աղաչել.

—Տէր առիւծ, ըսաւ, զիս ազատ ձգէ. օր կ'ըլլայ որ ես ալ քեզի օգտակար կ'ըլլամ։

Առիւծը խնդաց մուկին խօսքին վրայ։

—Անմի՛տ, ըսաւ անոր, դուն ինծի ի՞նչ օգտակարութիւն կրնաս ունենալ։

Բայց ազատ թողուց մուկը։

Քանի մը օր ետքը՝ առիւծը որսորդներու կողմէ լարուած թակարդի մը մէջ բռնուեցաւ։ Յուսահատութենէն կ'ոռնար, որովհետեւ կը զգար որ չպիտի կրնայ թակարդէն ազատիլ։

Բայց ահա յանկարծ մկնիկը վազեց հասաւ, կրծելով կրծելով փրցուց թակարդին չուանները, և առիւծը ազատեցաւ։

Մի մոռնաք որ ամէնէն գօրաւորն անգամ միշտ կրնայ իրմէ տկարին պէտք ունենալ. հետեւաբար՝ պէտք չէ որ զայն արհամարհէ։

Հարցումներ Գիւրին վրայ (Դիրքը գոց) — Ի՞նչ է ընտանի կենդանին, ի՞նչ է վայրի կենդանին. — Ի՞նչ տարբերութիւն ունին իրարմէ — Ի՞նչ է գազանազուսպը — Քանի՞ տեսակ ընտանի կենդանի եւ քանի՞ տեսակ վայրի կենդանի գիտէ. — Ն՛երագրեցէք զանոնք:

Հարցումներ պատկերներուն վրայ (Դիրքը բաց). — Ի՞նչ ցոյց կուտայ առաջին պատկերը — Ի՞նչ ցոյց կուտան երկրորդ եւ երրորդ պատկերները. — Երրորդ պատկերին հետեւելով ցոյց տուէք առիւծին գանազան մասերը. — Երկրորդ պատկերին մէջ ո՞րն է արու առիւծը, ո՞րն է էգը. — Ինչի՞ն ճանչցաք զանոնք:

---

57. ՏՂԱՔԸ ԿԸ ՊԱՐԻՆ

(ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ԱՌԱՆՑ ՆԻՒԹԻ)

Հարցումներ. — Քանի՞ տղամ եւ ուրիշ ինչե՞ր կը տեսնէք պատկերին մէջ. — Ի՞նչ կ'ընեն տղամը. — Ի՞նչ է ոտքի տղան. — Սագերը ո՞ւր կեցած են. — Տղոցմէն քանի՞ն մանչ են, քանի՞ն աղջիկ.

58. ԱՌԻՒԾԸ ԵՒ ՊԱՀԱԿԸ

(ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ)



Հրահանգ. — Առաջ պահակը կեցեր էր (ո՞ւր, ինչի՞ առջեւ, ի՞նչ ձեւով) երբ յանկարծ առիւծը վրայ հասաւ (ինչի՞ն եղեւէն. պահակը ի՞նչ կ'ընէր այդ միջոցին)։ Պահակը առիւծը տեսնելուն պէս (ի՞նչ բրաւ, ինչ կերպով յաջողեցաւ ազատիլ սոսկալի զազանէն)։

Հետեւելով վերի պատկերներուն, գրեցէք պատմութիւնը, կարելի եղածին չափ կարճ:

Ուսուցիչներուն. — Այս վարժութեան մէջ պէտք է օգնել աշակերտներուն, աշխատելով անոնց դիտողութիւնը կենդրոնացնելու պատկերներուն նոյնիսկ յետին մանրամասնութեանց վրայ:

59. ԶՈՒՐԻՆ ԵՐԳԸ

(ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ)

—«Վճիտ, մաքուր ջուր յստակ,
Որ ամէնուս բարիքն ես,
Կը սիրեմ ձայնդ անուշակ,
Ուրկէ՞ կու գաս, ըսէ մեզ։»

—«Կու գամ բարձրը լեռներէն,
Ու սարերէն ծաղկազարդ,
Ես հոսելով մեղմօրէն
Ոռոգեցի մարգն ու արտ...

«Դաշտէն անցած ատենս ալ
Խոտն ու թուփեր թրջեցի,
Կաղնիին բունն անայլայլ
Ու ծաղիկներ գարնայնի...

«Թրոչունն անցնէ իր պապակ
Արծաթափայլ ճամբուս վրայ,
Եւ ճառագայթն անապակ
Հոն աստղի պէս կը շողայ»։

60. ՔՕԹՕԹԻՆ ԱՐԿԱԾՆԵՐԸ

1.—Մեր Քօթօթը ալ փիղին հետ չիյնար, բայց նորէն հանդարտ չի կենար։ Առջի օր՝ վրան լաթով գոցուած սակառ մը տեսնելով, վազեց ուրախութեամբ։

2.—Քօթօթ հետաքրքիր էր։

—Նայինք ի՞նչ կայ մէջը, ըսաւ, և գլխովը վերցուց սակառին վրայ ծածկուած լաթը։

Քօթօթ կը յուսար որ աղուոր ուտելիք մը պիտի գտնէ սակառին մէջ։

3.—Բայց սակառին մէջ խխունջներ կային, և հազիւ թէ Քօթօթ լաթը վար առած էր, ամէնքն ալ դուրս ելան։

Քօթօթ յանկարծ պաղ բան մը զգաց պոչին վրայ։ Խխունջներէն մէկը պոչին ծայրը ելեր՝ այնտեղ տեղաւորուեր, իր միւս ընկերները կը կանչէր։

4.—Շուտ մը միւս խխունջներն ալ իրենց ընկերին հետեւեցան, և ամէնքն ալ Քօթօթի վրայ ելան։ Անպիտանին քիթը, գլուխը, կրունակը խխունջներով ծածկուած էին։

Պոռալով սկսաւ վազել, և մեծ դժուարութեամբ կրցաւ խխունջներէն ազատիլ։

5. — Բայց ահա նոր սակառ մըն ալ, երկու կափարիչով, որոնցմէ մէկը կէս մը բացուած էր։

Քօթօթի հետաքրքրութիւնը նորէն արթընցաւ։ Քիչ մը առաջ, ուրիշ սակառի մը մօտենալուն համար, փորձանքի հանդիպած էր։ Կը վարանէր այս անգամ։

6. — Քօթօթի վարանումը երկար չտեւեց։ Զկրցաւ հետաքրքրութեանը յաղթել, և գլուխը խոթեց սակառին մէջ։

Միշտ այն յոյսը ունէր որ աղուոր ուտելիք մը պիտի գտնէ։

7. — Սակայն այս անգամ ալ ուրիշ փորձանք։

Սակառին մէջ խեչափառ մը կար։ Հազիւ Քօթօթ գլուխը ներս խոթած էր, խեչափառը մկրատը երկարելով աղուոր մը խայթեց անոր ականջը։

8. — Քօթօթ մինչեւ որ ականջը ազատեց խեչափառին մկրատէն, հոգին բերանը եկաւ։

Ոռնալով փախաւ հեռացաւ սակառին քովէն, և կանգ առնելով սկսաւ լալ։ Ականջը աղուոր մը ծակած էր և կ'արիւնէր։

9. — Երթանք քիչ մը ջուր խմենք, ըսաւ խեղճը, թերեւս ցաւը անցնի։

Մօտը դոյլ մը կար. ուլիկն ալ անոր մօտն էր ու ջուր կը խմէր։ Քօթօթ հաչելով հաչելով ուլիկը վախցուց և սկսաւ ինք խմել ջուրը։

Դիտմամբ ախորժակով կը խմէր, որպէս զի ուլիկը բոլորովին նեղանայ։

10. — Բայց ուլիկը պոռաց, մայր այծիկը իր զաւկին ձայնը առնելով վրայ հասաւ, տեսաւ եղածը, և գլխու զօրաւոր հարուածով մը չար շնիկը նետեց հեռուն։

11. — Քօթօթ բախտ չունէր։ Մամիկիս գուլպայի դերձանին գունտը գետինն էր ինկեր. ասեղներն ալ վրան էին։

Քօթօթ անոր վրայ ինկաւ և ասեղները, որոնք շատ սուր էին, միսը մտան։

12. — Ցաւէն խենթեցած, Քօթօթ ոտքի ելաւ շուտ մը, և սկսաւ վազել՝ առանց առջին նայելու։

Իրը թէ չէին բաւեր այդ ամէն փորձանքները, վագած ատենը գլուխը ծառի մը կոճղին զարկաւ, այնքան ոյժով որ նուաղեցաւ ինկաւ։

Թող անպիտանը խելօք կենար որ այդ փորձանքները չգային գլխուն։

Ուսուցիչներուն.— Այս դարին մաս կը կազմէ նաև յայտարդ հին առանց նիւթի վարժութիւնը։

61. ՔՕԹՕԹԻՆ ԱՐԿԱԾՆԵՐԸ

(ՎԱՐԺՈՒԹԻՆ ԱՌԱՆՑ ՆԻՒԹԻ)



Հրահանգ.—Նախորդ պատմութեան հետեւելով, ցոյց տուէք թէ այս տասներկու պատկերներուն իւրաքանչիւրը անոր ո՞ր հատուածին կը պատշաճի:

62. ՉԱՐԸ ՄԻՇՏ ԿԸ ՏՈՒԺԷ

Հրանտ չար տղայ մըն էր, առանց պատճառի կը վշտացնէր իր ընկերները. շատ անգամ նաև չարութեամբ կը փոխարինէր իրեն եղած բարիքը։

Օր մը, հայրը դանակ մը տուած էր իրեն որ սուրցնէ հեսանաքարին վրայ։ Հրանտ մէկ ձեռքով դանակը բռնած էր ու միւսով ալ հեսանաքարը կը դարձնէր, և շատ կը յոգնէր։



Բայց ահա յանկարծ իրեն մօտեցաւ այն փիղը՝ որ մեր Քօթօթին լաւ դաս մը տուած էր։

Բարի կենդանին շուտ մը կնճիթովը բռնեց հեսանաքարին թեւը և սկսաւ դարձնել։ Հրանտին գործը դիւրացաւ, ու շուտով սուրցուց դանակը։

Ակնիւ տղայ մը անշուշտ պէտք էր շնորհակալութիւն յայտնէր փիղին, անոր պտուղ մը տալով, բայց Հրանտ չար էր. փոխանակ պտուղ

տալու, սուրցուցած դանակը փիղին կնճիթը մխեց, և սկսաւ խնդալ, ըսելով.

—Իրաւ ադուոր սուրցեր է, վարպետ փիղ, ասեղէ մը աւելի դիւրութեամբ մտաւ կնճիթիդ մէջ։

Սակայն շուտով իր չարութեան պատիժը պիտի գտնէր։

Փիղը հեզ կենդանի մըն է, բայց երբ իրեն դպչին, ինք ալ կը չարանայ։

Տեսնելով Հրանտի ապերախտութիւնը, շուտ մը կնճիթը վերցուց և չար տղուն գլուխը բռնելով ադուոր մը քսեց հեսանաքարին վրայ։

Հրանտ սկսաւ պոռալ։ Քիթը բզքտուած էր ու կ'արիւնէր։



Փիղը դեռ երկար ատեն շարունակեց այդ պատիժը, առանց կարեւորութիւն տալու Հրանտի պոռչտուքներուն։ Յետոյ թողուց որ երթայ։

Խեղճը վազելով հեռացաւ փիղին քովէն։ Քիթը ջարդ ու փշուր եղած էր և արիւնը առատութեամբ կը հոսէր։

Այդպէս վազելով ու ցաւէն պոռալով՝ Հրանտ վերջապէս տուն գնաց, լը-ւացուեցաւ, և հայելի մը առնելով դէմքը դիտեց։ Արիւնը դադրած էր, բայց քիթին կէսը չկար, և դէմքը շատ տգեղ կ'երեւար։

Հրանտի սիրտը ցաւեցաւ. սակայն եղածը եղած էր։ Կը կատղէր փիղին դէմ։

—Շատ չար կենդանի է եղեր, կ'ըսէր, նայեցէք մէյ մը, ինչ փորձանք բերաւ գլխուս։

Բայց չէր մտածեր որ չարութիւնը ինք ըրած էր, և թէ փիղը իրաւունքով վնասած էր իրեն։

Միւս օրը՝ ընկերները զարմացան մնացին, իր քիթը այդ վիճակին մէջ տեսնելով։

Հրանտ հեռու կը փախչէր անոնցմէ և կ'աշխատէր դէմքը ծածկել, որովհետև պիտի հարցնէին թէ ինչո՞ւ դէմքը այլափոխուեր է։

Բայց որ կողմ փախչէր՝ միշտ դէմը մէկը կ'ել-

լէր։ Զէր կրնար ամէնէն ալ փախչիլ, ու կը խպնէր ըսելու որ փիղին բարիքը չարութեամբ փոխարինած ըլլալուն համար այդպէս քիթին կէսը վրայ տուած էր։

Հրանտ ստիպուեցաւ սուտ խօսիլ, ըսաւ թէ սանդուխէն վար ինկած է։ Զարութիւն մը ըրած ըլլալուն համար՝ ուրիշ չարութիւն մըն ալ ըրաւ, սուտ խօսեցաւ։

Արդէն այն որ անգամ մը գէշութիւն մը կ'ընէ, ատիկա ծածկելու համար պիտի ստիպուի ուրիշ շատ գէշութիւններ ընել։

Բայց ընկերները չհաւատացին իրեն։ Քիչ ետքը, փիղին տուած պատիժը իմացուեցաւ, և ալ բոլոր տղաքը սկսան ծիծաղիլ իր վրայ։

Հարցումներ նիւթին վրայ (Գիրքը գոց).—Հրանտի հայրը ի՞նչ գործ յանձնած էր իրեն, եւ փիղը ի՞նչ կերպով այդ գործը դիւրացուց.—Հրանտ ինչո՞վ փոխարինեց փիղին բարիքը.—Հետեւանքը ի՞նչ եղաւ.—Հրանտ ինչո՞ւ խպնեցաւ ճշմարտութիւնը իր ընկերներուն յայտնելու.—Հրանտ ուրիշ ի՞նչ գէշ բան ըրաւ:

Հարցումներ պատկերներուն վրայ (Գիրքը բաց).—Պատկերներուն հետեւելով կրկնեցէք պատմութիւնը.—Ըսէք թէ ի՞նչ մասերէ բաղկացած է հեռադիտակը որ կը տեսնուի առաջին եւ երկրորդ պատկերներուն մէջ:

63. ԲՐԴՈՏԻՆ ԱՐԿԱԾԸ

(ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ)

Բրդոտը՝ մեր կատուն՝ կը ճանչնաք արդէն։

Խեղճին գլխուն նորէն փորձանք մը եկաւ, և ի՞նչ փորձանք։ Երէկ առտու՝ յանկարծ պոչը տնկեց, պէխերը ցցեց և սկսաւ վազել։

(Ո՞ւր կը վազէր. ի՞նչ կը գտնուէր դէմը. ի՞նչ տեսաւ անոր մէջ որ վազեց։)



Բայց մեր Բրդոտին բախտէն՝ ականատը լաւ տեսակէն չէր։ Մուկը անցեր էր անոր դռնէն, մտեր էր ներս ու պանիրը կը կրծէր, և դուռը չէր գոցուած։

Մինչդեռ երբ Բրդոտը գլուխը ականատին դուռնէն ներս խոթեց, դուռն է

(Ի՞նչ եղաւ ականատին դուռը. հապա Բրդո՞տը. ո՞ր տեղէն քաշուեցաւ։)



Խեղճ բրդոտ։ Շատ աշխատեցաւ որ գլուխը հանէ ականատէն դուրս, բայց դուռը լաւ գոցուեր էր։ Կը պոռար ու կը կանչէր։ Իր պոռչտուքը լսելով, մուկերն ալ դուրս ելան իրենց ծակերէն, և

(Ինչ բրին մուկերը. ինչո՞ւ ուրախ էին. ինչո՞ւ չէին վախնար Բրդոտէն։)



Բարեբախտաբար մայրս վրայ հասաւ և Բրդոտը ազատեց։ Եթէ քիչ մը ուշ հասնէր, անպիտանը խեղդուած էր։ Հիմայ աղուոր ականատ մը ունինք ու մուկերը

(Ինչ կ'ըլլան երբ անոր կը մօտենան։)

Հրահանգ.—Պատկերներուն նայելով գրեցէք պատմութեան պակաս մասերը, կարելի եղածին չափ կարճ։

64. ԿԱՂԱՆԴԻ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

(ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ)

—Ինչո՞ւ կը յօրանջես։
—Ուղերձ մը գոց կ'ընեմ։
—Կը ձանձրանա՞ս ուրեմն...
—Քունը կուգայ, Սինէմ։
—Որո՞ւ համար է այդ։
—Իմ հօրաքրոջս համար

Ոտանաւոր գրրեն ալ սեպեցին յարմար,
Որպէսզի հօրաքոյրս ըլլայ գոհ և ժպտուն։
—Ոտանաւորն ի՞նչ է։
—Է՛հ, չես հասկընար դուն։
—Բացատրէ, հասկընամ։
—Ոտանաւո՞ր... գիտե՞ս

Մասնաւոր բառեր են... երբ կը խօսինք այսպէս՝
Պարզ կերպով կը խօսինք...։ Ոտանաւորն, անդին
Ճոխ, շրքեղ, ներդաշնակ, վրսեմ է ու խորթին...
Եւ զայն գրրողներն ալ շատ կը հաւնին անոր։
Քուկինդ ըսէ տեսնեմ։
—Իմանա՞լ կ'ուզես որ...։

—Ուղերձիդ մէջ ի՞նչ բաներ կան
Քուն բերող և ապուշական...։

—«Մեր սիրոյն և մեր մաղթանքին
Ընկալ նըւէրն երախտագին
Եւ մեր իղձերն որք դէզադէզ
Երջանկութիւն կը բերեն քեզ։
Բարիքներէդ բազմատեսակ
Թող Աստուած քեզ հիւսէ պըսակ,
Բաղձանքներըդ կատարուին միշտ
Եւ շատ ապրիս գոհ և անվիշտ։»

—Վայ, վայ, վայ, վայ, այդ ինչ բառեր կան այ-
յանդակ,
Աւելի լաւ կ'ըլլայ որ երթաս շիտ շիտակ
Ըսես.—«Անուշիկ հօրաքոյր,
Եկայ որ քեզ տամ մէկ համբոյր,
Գոց չեմ ըրած ոտանաւոր
Բայց կը սիրեմ քեզ, իրաւ որ,
Եւ կ'ուզեմ որ խնդումերես
Դուն ալ գրկես զիս ու սիրես...։»

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

(ԵՂԱՆԱԿՈՎ)

ԿԱՂԱՄԲՆԵՐ ՏՆԿԵԼ ԳԻՏԷՔ



Կաղամբները տնկել գիտեն,
Շատ խոշոր շատ խոշոր,
Կաղամբները տնկել գիտեն
Մեր գիւղին մէջ, ամէն օր։

Զանոնք կը տնկեն ոտքով,
Շատ խոշոր, շատ խոշոր,
Զանոնք կը տնկեն ոտքով,
Մեր գիւղին մէջ ամէն օր։

Զանոնք կը տնկեն մատով,
Շատ խոշոր, շատ խոշոր,
Զանոնք կը տնկեն մատով,
Մեր գիւղին մէջ ամէն օր։

Զանոնք կը տնկեն քիթով,
Շատ խոշոր, շատ խոշոր,
Զանոնք կը տնկեն քիթով,
Մեր գիւղին մէջ ամէն օր։

Զանոնք կը տնկեն լեզուով,
Շատ խոշոր, շատ խոշոր,
Զանոնք կը տնկեն լեզուով
Մեր գիւղին մէջ ամէն օր։

Զանոնք կը տնկեն բերնով,
Շատ խոշոր, շատ խոշոր,
Զանոնք կը տնկեն բերնով,
Մեր գիւղին մէջ ամէն օր։

Դաւնօր.—Ուզուածին յատ կարելի է երկարել այս երգը, օրինակ՝ խերֆով, այֆով, ձեռֆով, եւն։ Տղամը՝ իւրամանչիւր տուն երգած ատենին՝ պէտք է ցոյց տան մարմնին այն մասը զոր կը յիշեն։

ԿԱՏՈՒՆ ԵՒ ՀՈՎՈՒՈՒՀԻՆ



Հովուուհի մը կար որ,
Հա՛, հա՛, հի՛, հի՛, փոքրիկ գեղուհի,
Հովուուհի մը կար որ
Ոչխարներ կ՚արածէր,
Հի՛, հի՛,
Ոչխարներ կ՚արածէր։

Պանիր կը շինէր ան,
Հա՛, հա՛, հի՛, հի՛, փոքրիկ գեղուհի,
Պանիր կը շինէր ան
Ոչխարներուն կաթէն,
Հի՛, հի՛,
Ոչխարներուն կաթէն։

Կատուն տեսաւ զանի,
Հա՛, հա՛, հի՛, հի՛, փոքրիկ գեղուհի,

Կատուն տեսաւ զանի
Աչքով չարաճըճի
Հի՛, հի՛,
Աչքով չարաճըճի։

«Թէ թաթդ անոր դպչի»,
Հա՛, հա՛, հի՛, հի՛, փոքրիկ գեղուհի,
«Թէ թաթդ անոր դպչի
Ծեծ կը քաշեմ քեզի,
Հի՛, հի՛,
Ծեծ կը քաշեմ քեզի»։

Զերկարեց թաթն, իրաւ,
Հա՛, հա՛, հի՛, հի՛, փոքրիկ գեղուհի,
Զերկարեց թաթն, իրաւ,
Թունչն անոր մէջ դրրաւ։
Հի՛, հի՛,
Թունչն անոր մէջ դրրաւ։

Հովուուհին ճարճատուն՝
Հա՛, հա՛, հի՛, հի՛, փոքրիկ գեղուհի,
Հովուուհին ճարճատուն
Մեռցուց պզտիկ կատուն,
Հի՛, հի՛,
Մեռցուց պզտիկ կատուն։

Վազեց հայրիկին քով
Հա՛, հա՛, հի՛, հի՛, փոքրիկ գեղուհի,
Վազեց հայրիկին քով
Ներումի խնդրանքով։

Հէ, հէ,
Ներումի խնդրանքով։

«Հայը, ըսաւ, կը ներես»,
Հա, հա, հէ, հէ, փոքրիկ գեղուհի,
«Հայը, ըսաւ, կը ներես,
Կատուս մեռցուցի ես,
Հէ, հէ,
Կատուս մեռցուցի ես»։

«Իբրեւ պատիժ, աղջիկս»,
Հա, հա, հէ, հէ, փոքրիկ գեղուհի,
«Իբրեւ պատիժ, աղջիկս,
Պիտի տաս ինձ պաչիկ,
Հէ, հէ,
Պիտի տաս ինձ պաչիկ»։

«Պատիժն է քաղցրագին»,
Հա, հա, հէ, հէ, փոքրիկ գեղուհի,
«Պատիժն է քաղցրագին,
Ո՜հ, մեղք գործենք կրկին
Հէ, հէ,
Ո՜հ, մեղք գործենք կրկին»։

ԴԱՇՏԻՆ ՎՐԱՅ



Գիւղին մօտ, դաշտին վրայ
Կազմած կլոր շրջանակ,
Գիւղին մօտ, դաշտին վրայ
Պար կը բռնեն շարունակ։

1. Խելօք տղաք սանկ կ'ընեն,
Եւ յետոյ՝ սանկ նորէն։

2. Պարտիզպաններ սանկ կ'ընեն,
Եւ յետոյ՝ սանկ նորէն։

3. Լաթ լուացողներ՝ սանկ կ'ընեն,
Եւ յետոյ՝ սանկ նորէն։

4. Հողագործներ սանկ կ'ընեն,
Եւ յետոյ՝ սանկ նորէն։

5. Անառակներ սանկ կ'ընեն,
Եւ յետոյ՝ սանկ նորէն։

6. Տիրացուներ սանկ կ'ընեն,
Եւ յետոյ՝ սանկ նորէն։

Դանօր.—Կարելի է ուզուածին չափ երկարել այս երգը, աւելցնելով նոր տուներ, ինչպէս՝ կառապաններ, խաշնարածներ, վսագործներ, ջաղացպաններ սանկ կ'ընեն, եւայլն։ Տղամը պէտք է իւրամանչիւր տուն երգած ատենին շարժուածներով նմանցնեն իրենց յիշած անձը, օրինակ՝ խեղճ տղան, պարտիզպանը, կառապանը, եւայլն։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
*C.C.P.A. Публичная Библиотека
7/XI--1922
имени А. Мясницяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

«Ազգային գրադարան»
NL0060683

—Ինչո՞ւ ուրախ է այս պզտիկը։

—Որովհետև ԴԱՅԼԱՅԼԻԿի Ա. տարին կարդացեր, Բ. տարին պիտի կարդայ։

Դիմեցէք Գրլրճեան Գրատուն, և ան ձեզի պիտի հայթայթէ նորագոյն ու ամենադիւրին մէթոտներով պատրաստուած ուրիշ բազմաթիւ դասագիրքեր, որոնք այսպէս շէնշող ու զուարթ կը դարձնեն պզտիկ տղաքը, նոյն ատեն զանոնք զարգացնելով։

ՀԱՍՑԷ՝

ԳՐԱՏՈՒՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԼԼԸՃԵԱՆ

Կ. Պոլիս, Զաքմաքճիլար, թիւ 25

ԳԻՆ 5 ՂՐՇ.